# Քրիստոնյա Հայաստան

2006, ՆՈՅԵՄԲԵՐ Ա, ԹԻՎ 21 (233)

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ


**ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

### Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

*Նոյեմբերի 2-ին*

### ՌԴ Կենտրոնական բանկի նախագահին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ռուսաստանի Դաշնության Կենտրոնական բանկի նախագահի Սերգեյ Իգնատեւի գլխավորած պատվիրակությանը՝ կազմված ԱՊՀ տարբեր երկրների կենտրոնական բանկերի պաշտոնյաներից:

Նորին Սրբությունը գոհունակություն հայտնեց երկրների միջեւ առկա համագործակցության առիթով՝ հորդորելով պահպանել եւ առավել զորացնել այն բարեկամությունը եւ ավանդական կապերը, որ շարունակ կերտվել են ժողովուրդների համատեղ ջանքերով:

Հանդիպման ավարտին Ամենայն Հայոց Հայրապետը հաջողություն մաղթեց խմբի աշխատանքներին:

*Նոյեմբերի 7-ին*

### Լեհաստանի Հանրապետության Սենատի Մարշալին



Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Լեհաստանի Հանրապետության Սենատի Մարշալ Բոգդան Բորուսեւիչի գլխավորած պաշտոնական պատվիրակությանը՝ ՀՀ ԱԺ ներկայացուցիչների եւ երկու երկրների դեսպանների ուղեկցությամբ:

«Նման այցելությունները գալիս են նպաստելու մեր երկու ժողովուրդների եւ երկրների միջեւ հարաբերությունների սերտացմանը»,- ընդգծեց Նորին Սրբությունը՝ անդրադառնալով երկու ժողովուրդների դարավոր բարեկամությանը եւ երկու երկրների միջեւ ձեւավորված համագործակցությանը: Ի դեմս Լեհաստանի Սենատի Մարշալի՝ Վեհափառ Հայրապետը նաեւ իր գնահատանքը հայտնեց Լեհաստանի Հանրապետության իշխանություններին՝ 2005 թվականին Լեհաստանի Սեյմում Հայոց Ցեղասպանության ճանաչման, ինչպես նաեւ հայ համայնքի հանդեպ մշտապես ցուցաբերվող ազնիվ ու բարյացակամ վերաբերմունքի համար: Նորին Սրբությունը նաեւ շնորհավորեց պրն Բորուսեւիչին՝ նոյեմբերի 11-ի Լեհաստանի Անկախության օրվա առիթով՝ մաղթելով լեհ աստվածասեր ժողովրդին խաղաղ եւ բարօր կյանք:

Իր հերթին պրն Բորուսեւիչը, խոսելով լեհ-հայկական դարավոր հարաբերությունների մասին, նշեց Լեհաստանի պատմության մեջ հայերի կարեւոր ներդրման մասին:

Հանդիպման ընթացքում Ամենայն Հայոց Հայրապետն անդրադարձավ Լեհաստանում ապրող հայ համայնքի հոգեւոր եւ եկեղեցական կյանքի կազմակերպման խնդրին: Այս առնչությամբ պրն Բորուսեւիչը տեղեկացրեց, որ առաջիկայում Լեհաստանի իշխանությունները պաշտոնապես կգրանցեն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին եւ համայնքը:

Հանդիպման ընթացքում խոսվեց նաեւ երկու ժողովուրդների կյանքում իրենց եկեղեցիների կարեւոր առաքելության մասին:

## Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օծման եւ գահակալության 7-րդ տարեդարձը

*Մայր Աթոռ է բերվել Սկեւռայի մասնատուփը*

Կիրակի՝ նոյեմբերի 5-ին, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին նշեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական օծման եւ գահակալության 7-րդ տարեդարձը: Այս առիթով հայոց բոլոր եկեղեցիներում հավարտ Ս. Պատարագի կատարվեց Հայրապետական մաղթանք:



Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ս. Պատարագ մատուցվեց հանդիսապետությամբ Ամենայն Հայոց Հայրապետի: Պատարագիչն էր Ավստրալիայի ու Նոր Զելանդիայի թեմի առաջնորդ Տ. Աղան արք. Պալիոզյանը:

Ս. Պատարագի ավարտին Իջման Սբ Սեղանի առջեւ կատարվեց Հայրապետական մաղթանք: Մինչ արարողությունն արտասանած իր քարոզում Աղան սրբազանն ընդգծեց այն սրբազան դերն ու նշանակությունը, որ ունեցել եւ ունի հայ ժողովրդի կյանքում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, եւ կոչ արեց մշտահունչ աղոթքի, որ Աստված անսասան պահի Մայր Աթոռը եւ երկար ու բեղուն կյանք շնորհի Հայոց Հայրապետին:

Շնորհավորելով ազգընտիր Հայրապետին յոթնամյա գահակալության առիթով՝ Աղան սրբազանը նշեց. *«Այս յոթ տարիները եկան մեզ ասելու եւ հաստատելու, որ Վեհափառ Հայրապետի հոգատար աջը հովանի է ոչ միայն Հայաստանի, այլեւ ողջ Սփյուռքի հայության վրա: Եթե նայելու լինենք անցած յոթ տարիներին, ապա կտեսնենք, թե ինչպիսի վայրերում ու տարածքներում է բնակություն հաստատել Լուսավորչի լույս հավատքը: Այն տաճարները, այն եկեղեցիները, որ կառուցվել են, կառուցվել են, որպեսզի Լուսավորչի հավատքը, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հավատքը հասնի յուրաքանչյուր հայորդու՝ լինի Հայաստանի, թե Սփյուռքի մեջ»:* Վերջում սրբազան հայրը ողջ հոգեւոր դասի ու հավատացյալ հոտի կողմից մաղթեց, որ Վեհափառ Հայրապետի գավազանը մշտապես ծաղկյալ մնա, իսկ աշխատանքի դաշտը՝ լայն ու ընդարձակ, որպեսզի նա հասնի մեր ժողովրդի ծով կարիքներին:



Ամենայն Հայոց Հայրապետի գահակալության առթիվ Հայ Եկեղեցու Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմից Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին էր բերվել քրիստոնյա աշխարհի հրաշագործ սրբություններից մեկը՝ Սկեւռայի մասնատուփը:

1283 թ. Սսի Կոստանդին արքեպիսկոպոսի հրամանով ստեղծված եւ 18 սրբերի (սբ Պողոս, Պետրոս, Թադեւոս, Բարթողոմեոս առաքյալների, սբ Գրիգոր Լուսավորչի, Հակոբ Մծբնա հայրապետի, Հովհան Ոսկեբերանի, սբ Կատարինեի եւ այլոց) մասունքներ պարունակող Սկեւռայի նշանավոր մասնատուփը 500 տարի համարվում էր կորած: 1884 թ. Փարիզում այն գնվում է Բազիլեւսկու բարձրաժեք իրերի հավաքածուից՝ Էրմիտաժի կայսերական հավաքածուի համար:

2000 թ. Սանկտ-Պետերբուրգի Սբ Կատարինե եկեղեցու օծման առիթով Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ Ռուսաստանի հայոց թեմ կատարած այցի ժամանակ մասունքները Էրմիտաժի կողմից նվիրաբերվում են Հայոց Եկեղեցուն եւ պահվում նորաօծ Սբ Կատարինե եկեղեցում:

*Շարունակությունը՝ էջ 2*

ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

# Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օծման եւ գահակալության 7-րդ տարեդարձը

*Սկիզբը՝ էջ 1*

Վեհափառ Հայրապետի գահակալության 7-րդ տարեդարձի առիթով Սբ Էջմիածին բերված մասնատուփը մեկ շաբաթ Մայր տաճարում գտնվելուց հետո կհանգրվանի Մայր Աթոռի «Ալեք եւ Մարի Մանուկյան» գանձատանը:

Հայրապետական մաղթանքն ավարտվեց Նորին Սրբության օրհնության խոսքով: Վեհափառ Հայրապետն իր ուրախությունը հայտնեց Սկեւռայի սրբազան մասունքների՝ Մայր Աթոռ բերվելու կապակցությամբ եւ կոչ արեց, որ «*.... ազգս հայոց ուխտի գա, խոնարհում եւ երկրպագություն բերի այս նվիրական մասունքներին, որպեսզի մեր սրբերի հրաշափառ զորությունը հեղվի նրանց կյանքերից ներս, հեղվի իրենց օջախներում եւ հայոց աշխարհում: Եվ այդ օրհնության ներքո ապրենք մենք՝ մեր նվիրյալ ծառայությունը բերելով մեր Եկեղեցուն, մեր հայրենիքին եւ մեր ժողովրդին*»:

Արարողությանը մասնակցում էին Մայր Աթոռի միաբաններ, թեմակալ առաջնորդներ, Գերագույն հոգեւոր խորհրդի անդամներ, ազգային բարերարներ եւ բազմաթիվ հավատացյալներ, որոնք եկել էին իրենց նվիրումն ու սերը հայտնելու Մայր Աթոռին ու նրա արժանընտիր Գահակալին:

# Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում գումարվեց Գերագույն հոգեւոր խորհրդի ժողով

Նոյեմբերի 2-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր նախագահությամբ գումարվեց Գերագույն հոգեւոր խորհրդի ժողով: Ժողովը գումարվեց ընդլայնված կազմով, որին մասնակցում էին խորհրդի հոգեւորական եւ աշխարհական անդամներն ինչպես Հայաստանից, այնպես եւ արտերկրից:

Ժողովը բացվեց Տերունական աղոթքով: Ողջունելով Գերագույն հոգեւոր խորհրդի անդամներին՝ Հայոց Հայրապետն անդրադարձավ օրակարգում առկա խնդիրներին եւ հաջողություն մաղթեց առաջիկա աշխատանքներում:

Որպես ատենապետեր՝ նիստերը վարեցին Տ. Վաչե արք. Հովսեփյանը եւ Ավստրալիայի ու Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Աղան արք. Պալիոզյանը:

Ժողովը քննության առավ եկեղեցի-պետություն հարաբերությունների օրենսդրական դաշտի կարգավորման ուղղությամբ տարված աշխատանքների ընթացքը: Քննարկմանը հրավիրված էր նաեւ ԱԺ նախագահի Տիգրան Թորոսյանը:

Օրակարգում քննարկվեցին Մայր Աթոռի սոցիալական ոլորտում իրականացվող ծրագրերի համակարգման, համայնքային-ծխական կանոնադրության նախագծի խմբագրման, ինչպես նաեւ քրիստոնեական դաստիարակության եւ ներեկեղեցական կյանքի վերակազմակերպման հետ առնչվող հարցեր:

Ժողովն անդրադարձավ նաեւ Հայաստանում գործող աղանդավորական կազմակերպությունների մարդորսական գործունեությանը եւ կարեւորությամբ նշեց հայաստանյան թեմերում եւ հեռավոր շրջաններում մեր ժողովրդի հոգեւոր կյանքն անաղարտ պահելու եւ հոգեւոր քարոզչությունն առավել արդյունավետ իրականացնելու անհրաժեշտությունը:

Ժողովի աշխատանքները շարունակվեցին նաեւ նոյեմբերի 4-ին:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# ԿԱԼԻՆԻՆԳՐԱԴՈՒՄ ՕԾՎԵՑ Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ



2006 թ. հոկտեմբերի 14-ին Կալինինգրադում կատարվեց երկար սպասված Ս. Ստեփանոս հայկական եկեղեցու հանդիսավոր օծումը: Երեկոյան՝ նավակատիքի արարողությունից անմիջապես հետո, ձեռամբ Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպս. Ներսիսյանի, կատարվեց եկեղեցու գմբեթի եւ զանգակատան խաչերի օծումը:

Հոկտեմբեր 14-ի առավոտյան տեղի ունեցավ Կալինինգրադի հայ համայնքի կողմից Ռուս Ուղղափառ Եկեղեցու Սմոլենսկ-Կալինինգրադի թեմին նվիրաբերված հայկական խաչքարի օծման արարողությունը, որը տեղակայված է Կալինինգրադի կենտրոնական, նորակառույց Ամենափրկիչ առաջնորդանիստ եկեղեցու շրջափակում: Խաչքարի հանդիսավոր օծման արարողությունը կատարվեց ձեռամբ Եզրաս եպս. Ներսիսյանի եւ առընթերակայությամբ Սմոլենսկ-Կալինինգրադի թեմի առաջնորդ Սերաֆիմ եպիսկոպոսի: Ներկա էին բազմաթիվ հայ եւ ռուս հավատացյալներ:

Ժամը 11-ին սկսվեց Ս. Ստեփանոս եկեղեցու անդրանիկ պատարագը, որի ընթացքում տեղի ունեցավ եկեղեցու օծման սրբազան արարողությունը: Պատարագիչ սրբազան հայրն իր շնորհավորանքի խոսքն ուղղեց բոլոր ներկաներին եւ հորդորեց համախմբվել Սուրբ Եկեղեցու շուրջ եւ հավատքով ու գործով շարունակել անմնացորդ սիրով ու նվիրվածությամբ ծառայել հայ ժողովրդին ու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին: Ընթերցվեց նաեւ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի սրբատառ կոնդակը՝ բարերար, տարածաշրջանի հայ ազգամշակութային ինքնավարության հոգաբարձուների խորհրդի նախագահ, Հայաստանի Հանրապետության պատվավոր հյուպատոս Յուրի Քաջոյանին՝ «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգեւատրելու մասին:

Եկեղեցու օծման արարողությանը ներկա էին Ռուս Ուղղափառ Եկեղեցու ներկայացուցիչներ, մարզային եւ քաղաքային դումաների պատգամավորներ, մարզային կառավարության նախարարներ, Կալինինգրադում հավատարմագրված Եվրոպական երկրների հյուպատոսներ, տարբեր ազգային միությունների ներկայացուցիչներ, ինչպես նաեւ Սանկտ Պետերբուրգում ՀՀ հյուպատոս Ռուբեն Հակոբյանը, Ռուսաստանի Հայերի Միության փոխ-նախագահ Գերման Անանյանցը եւ բազմաթիվ հավատացյալ հայորդիք:

*Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմի*
*Մամլո դիվան*



# Հոգեւոր հովվի խոսքի նշանակությունը հավատացյալի կյանքում

> *«Բարի խոսքը մեղրի խորիսխ է, եւ հոգու բժշկություն է նրա քաղցրությունը»*
> *(Առակ. ԺԶ 24):*

Հոգեւոր անձի համար չափազանց կարեւոր է մարդկանց հասկանալ. կարողանալ նրանց զգացմունքները, մտքերը, հույզերն ու ապրումները վերլուծել, ըմբռնել ու ըստ այդմ օգնել: Եվ քանի որ հոգեւորականի եւ հավատացյալի շփումը հիմնականում տեղի է ունենում խոսքի միջոցով, ուստի խոսքը, եթե չասենք գլխավոր, ապա ծանրակշիռ տեղ է գրավում քահանայի կյանքում:

Դարեր շարունակ հոգեւոր հովիվն իրավասու է եղել հավատացյալի հոգին բժշկելու զանազան հիվանդություններից, եւ այսօր էլ մարդիկ շատ հարցերում նրան են վստահում իրենց գաղտնիքները: Այս առումով հոգեւոր հովվի առաքելության անբաժանելի մասն է կազմում ոչ միայն հավատացյալի հոգու բժշկությունն ախտերից, այլ նաեւ նրան զանազան գայթակղություններից զերծ պահելը՝ ապահովելով հոգու խաղաղությունը: Պատահական չէ, որ Աստվածաշնչում բազմաթիվ հատվածների ենք հանդիպում, որոնցում հատկապես մատնանշվում է խոսքի բուժիչ հատկությունը:



Այսպես, Սողոմոն Իմաստունի մոտ կարդում ենք. «Անեղ խոսքը խռովում է արդարի սիրտը, բարի խոսքը ուրախացնում է նրան» (Առակ.ԺԲ 25), «Սիրալիր պատասխանը մեղմացնում է զայրույթը, բայց խիստ խոսքը բարկություն է հարուցում» (Առակ. ԺԵ 1), «Պատշաճ ասված իմաստուն խոսքերը նման են սարդիոնով շարված ոսկի խնձորի» (Առակ. ԻԵ 11), «Իմաստունների խոսքերը նման են եզների խթանի կամ մեծավորի տված մուրհակի վրա խփած կնիքի» (Ժողովող ԺԲ 11), «Քաղցր բերանը շատացնում է իր բարեկամներին, քաղցրախոս լեզուն մեծացնում է մտերմությունը» (Սիրաք Զ 5), «Միթե ցողը չի՞ զովացնում տոթը. այդպես էլ լավ խոսքն ավելի լավ է, քան նվերը: Շնորհալի մարդը երկուսն էլ ունի» (Սիրաք ԺԸ 16), «Խելամիտ խոսքերով իրենք էլ են իմաստնանում եւ ճշմարիտ ու տեղին առակներ բերում» (Սիրաք ԺԸ 29), «Ինչպես մարդու մարմնի մեջ մխրճված նետն է, այնպես էլ խոսքն է անմիտ մարդու սրտում» (Սիրաք ԺԹ 12):

Հոգեւորականի խոսքի արժեւորումը հավատացյալի կյանքում կարեւորվում է նաեւ Ղուկասի Ավետարանի Ժ գլխի Ե-Զ համարներում. «Որ տունը մտնեք, նախ ասացեք. «խաղաղությո՛ւն այս տանը». եթե այնտեղ կա խաղաղասեր մարդ, ձեր խաղաղությունը նրա վրա կհանգչի. ապա թե ոչ՝ ձե՛զ կվերադառնա»: Իսկ սերմնացանի առակում սերմ-խոսքը, ընկնելով սրտի մեջ, կարող է արդյունք տալ. մեկին՝ երեսուն, մյուսին՝ վաթսուն, իսկ ուրիշին՝ հարյուր՝ ըստ ընդունողի ընկալման կարողության:

Հոգեւոր հովվի գործունեությունը պատասխանատու եւ պարտավորեցնող է: Այս իմաստով Գեւորգ Մեսրոպը գրում է. «Ան որ ինկած թշուառի մը ձեռք կը կարկառէ եւ կամ որբի մը արցունքները կը սրբէ մեր արդար յարգանքին ու սիրոյն արժանի կը հանդիսանայ, որովհետեւ մարդասիրութեան, ընկերասիրութեան գեղեցիկ զգացումովն է որ կը մղուի:

Արդեօք նոյնքան յարգանքի ու սիրոյ արժանի պիտի չըլլայ այն երկնային հրեշտակը, որ սէր ու խաղաղութիւն ցանելու համար կը շրջի միայն» (Գէորգ Մեսրոպ, «Հովուական Աստուածաբանութիւն Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ», Անթիլիաս, Լիբանան, 1979, էջ 61):

Դեռեւս չորրորդ դարում Ներսես Մեծն ու մեր հոգեւորականները հոգ էին տանում հիվանդների ու վշտացյալների համար: Եվ այսօր էլ ուղղափառ եկեղեցիներում հոգեւոր հայրերը հիվանդների շրջանակներում լայն գործունեություն են ծավալում (այցելում են հիվանդանոցներ, համագործակցում բժիշկների հետ, պատրաստում համապատասխան գրականություն):

Այս երեւույթը բարերար ազդեցություն է թողնում ոչ միայն հիվանդների վրա, այլեւ հոգեւորականների, որոնք լուրջ փորձառություն են ձեռք բերում: Ուրախալի է այն փաստը, ինչպես նշում է Գ. Մեսրոպը, որ հոգեւորականն այցելում է իր հավատացյալ հոտին թե՛ հիվանդության, մահվան, ընտանեկան վեճերի, դժբախտությունների, ձախորդությունների եւ թե՛ ուրախության առիթներով:

Հովնան արք. Տերտերյանը, ժամանակին խոսելով ընկերային կյանքում ավետարանական խոսքի կարեւորության մասին, նշում է, որ այն հանդես է գալիս որպես հոգեւոր սնունդ եւ նորոգության աղբյուր (տե՛ս Յովնան Ծայրագոյն Վարդապետ, «Հովուական Աստուածաբանութեան Գործնական Ձեռնարկ», Թորոնթո, 1989, էջ 6):

Հատկանշական է, որ սրբազանը կարեւորում է հիվանդներին այցելելը՝ բացատրելով, որ համայնքի անդամները կարիք ունեն իրենց հոգեւոր հովվի ներկայության, աղոթքի եւ նրա մխիթարական խոսքի (Նույն տեղում, էջ 25):

*Շարունակելի*

***Կարեն դպիր ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ***
***ԳՀՃ Ե լսարանի սան***

## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ՆԵՐՍԵՍ Դ ԿԼԱՅԵՑԻ

## (1166-1173)



*Սկիզբը՝ թիվ 19-20*

Հայոց հայրապետը Մանվելին ուղարկված նամակին կցեց մեկ այլ գրություն եւս՝ «Սահմանք հաւատոյ Հայաստանեայց Եկեղեցւոյ» խորագրով՝ կայսեր խնդրանքով երկրորդելով նախապես իր գրածը: Քանի որ առաջին գրությունը սոսկ եպիսկոպոսական էր, ուստի Մանվելը կամենում էր ունենալ դա կաթողիկոսի ստորագրությամբ: Եվ քանի որ Գրիգորը կենդանի չէր, Ներսեսը ստիպված եղավ իր եպիսկոպոսական գրությունը վավերացնել որպես կաթողիկոս: Թվում էր, թե դրա կարիքը չկար, սակայն Սմբատը համառորեն պահանջում էր դա կայսեր անունից: Հայոց հայրապետը պարզ գրում էր, որ ինքը հերձվածողության խավարը չի փորձում ծածկել ուղղափառության լույսով, այլ ներկայացնում է զուտ ճշմարտությունը: Հավատո երկրորդ գիրը, ինչպես եւ պետք էր ենթադրել, իր ամբողջության մեջ առաջինից չէր տարբերվում, եթե չհաշվենք «Սահմանք հաւատոյ» մասերը: Առաջին մասի մեջ ընդարձակ խոսվում է բնությունների միասնության մասին՝ մերժելով Նեստորին եւ Եվտիքեսին, բայց հերքելով Լեւոն կայսեր «ոմն եւ ոմն» դարձվածն ու պնդելով երկու բնությունների մեկ լինելը: Ծեսերի մեջ պաշտպանվում է բաղարջով պատարագելը Քրիստոսի գործածածի հետեւողությամբ՝ ներելով միաժամանակ հույների կողմից բաղարջ չօգտագործելը: Պաշտպանում է անջուր բաժակը, սակայն չի դատապարտում ջուր խառնողներին: Բացատրում է Ծնունդն ու Մկրտությունը միասին տոնելու հին ավանդույթը, սակայն վեճերի մեջ չմտնելով՝ նշում է, որ Զատիկը տարբեր օրերի էր տոնվում՝ առանց եկեղեցու միությանը խանգարելու: Նույն ձեւով խոսվում է «Սուրբ Աստուածի խաչեցար»-ի, խաչերի բեւեռ զարկելու, խաչեր օրհնելու, պատկերներ պատվելու եւ այլ հարցերի մասին՝ մշտապես պաշտպանելով Հայոց Եկեղեցու ավանդությունն ու սովորությունը, բայց եւ ճանաչելով յուրաքանչյուրի իրավունքը՝ ազատորեն պահպանելու իր սովորությունները: Մի խոսքով՝ կասկած չի կարող լինել, որ Ներսես Շնորհալին Հայոց Եկեղեցու մեծ պաշտպանն է եւ չի հանդուրժում որեւէ Եկեղեցու տիրապետությունն ու ուժով նրա պահանջները կատարելը: Իսկ մշտապես այսպես են գործել Բյուզանդական եւ Լատինական Եկեղեցիները՝ եկեղեցական միություն ձեռնարկելիս:

Սմբատը Հռոմկլայից ետ դարձավ հավանաբար 1168 թվի գարնանը, եւ պետք է ասել, որ Ներսեսի նամակը բյուզանդական արքունիքում լավ տպավորություն գործեց, այնպես որ վերջինս գայթակղություն ունեցավ ձեռնամուխ լինելու միավորման քայլերի: Բայց դրանք շատ գործնական չէին, քանի որ մի քանի տարի անցավ մինչեւ Մանվել կայսրից նոր պատասխան ստացվեց: Այդ ընթացքում կայսրը եւ Ղուկասին փոխարինած Միքայել պատրիարքը, ինչպես նաեւ եպիսկոպոսարանի սյունհոդոսն այն մտքին եկան, որ կարելի է օգտվել իբրեւ թե Ներսեսի ընդառաջող գործելակերպից եւ իրենց ենթարկել Հայոց եկեղեցին: Եվ մինչ բյուզանդացիները նման ծրագիր էին մտմտում, 1168 թվին մահացավ Թորոս Բ իշխանը եւ քանի որ չափահաս արու զավակ չուներ, նրա դեռահաս որդի Ռուբենը հռչակվեց հաջորդ՝ Թովմաս իշխանի խնամակալությամբ: Մահացած իշխանի եղբայր Մլեհը, որը վռնդվելով երկրից՝ հաստատվել էր Հալեպի սուլթանի մոտ, վերջինիս բանակով արշավեց Թովմասի դեմ եւ առաջին անգամ չհաջողելով՝ նոր զորքով հարձակվեց Ռուբինյան իշխանության վրա: Թովմասը, որ Ռուբենի պապն էր ու խնամակալը, փախավ Անտիոք, իսկ փոքրահասակ Ռուբենին տարան Հռոմկլա: Հայոց իշխանները համաձայնվեցին ճանաչել Մլեհի իշխանությունը, որը գահ բարձրացավ 1169-ին, եւ իշխանությունում խաղաղություն հաստատվեց: Բավական հանելուկային պայմաններում Հռոմկլայում մահացավ, սակայն ավելի շուտ՝ սպանվեց Ռուբենը: Թե չարագործներն ինչպես գործեցին, հայտնի չէ, բայց մի բան պարզ է, որ հազիվ թե կաթողիկոս Ներսեսը գործակցել է նրանց հետ: Հասկանալի է, որ նման գործակցության մասին, ինչպես պետք էր սպասել, աղբյուրները ոչինչ չեն ասում, սակայն քանի որ հայրապետանոցը Նուրեդդինի իշխանությամբ էր շրջապատված, չի բացառվում, որ նրա մարդիկ էլ սպանությունն իրականացրին՝ օրինականացնելու համար Մլեհի իշխանությունը Կիլիկիայում: Ներսեսը հովվապետեց Մլեհի իշխանության շրջանում, սակայն որեւէ օգնություն չցուցաբերեց նրան, իսկ վերջինս էլ բոլորովին չմիջամտեց նրա եկեղեցական գործերին:

Ստանալով Ներսեսի նամակն ու Արեւելք գալու առաջարկը՝ Մանվել կայսրը դա համարեց միանգամայն հնարավոր, սակայն կայսրության դժվարություններն արեւմուտքում այդ դարձրին անհնարին: Նա ստիպված էր կռիվներ մղել Հունգարական եւ Սերբական թագավորությունների դեմ, իսկ կայսրությունը Կիլիկիայում ոչ մի ապահովություն չէր խոստանում Մանվելին: Վիճակը քիչ թե շատ կայունացավ 1170 թվին, եւ կայսրը որոշեց պարզել, թե որքանով է հնարավոր երկու եկեղեցիների միությունը, այլ խոսքով՝ հայերը պատրա՞ստ են ընդունել բյուզանդական դավանանքը, թե՞ ոչ: Այդ նպատակով նա երկու պատգամավոր ուղարկեց Թեորիանոս Մագիստրոսին, որն ազգությամբ հույն էր, եւ Հովհաննես Ութմանին, որը Փիլիպուպոլսի հայոց վանքի վանահայրն էր եւ երբեմն հիշված է Վահան անունով: Հասկանալի է, որ նրանք Արեւելք ճամփա ընկան կայսեր նամակով եւ մայիսի 15-ին հատելով կայսերական սահմանը՝ ուղեւորվեցին Հռոմկլա, որտեղ բանակցություններ ու վիճաբանություններ սկսեցին Ներսես Շնորհալու հետ՝ միաբանության իրականացման եւ երկու բնության շուրջ: Թեորիանոսը, որ նշանավոր իմաստասեր էր, ոչ մի կերպ չէր կամենում տեղի տալ եւ ընդունել սուրբ հայրերի կամ Կյուրեղյան բանաձեւը, որ «մի է բնութիւն Բանին մարմնացելոյ»: Սակայն Ներսեսն այդ պաշտպանում էր ընդդեմ Նեստորի եւ Եվտիքեսի: Հակառակ Թեորիանոսի՝ Հովհաննեսը, դատելով սկզբնաղբյուրների կցկտուր տեղեկություններից, պաշտպանել է հայոց կաթողիկոսին: Ճնշումն այնքան մեծ էր, որ ի վերջո Ներսեսը համաձայնվեց, թե հույները, երկու ասելով, հեռու են Նեստորի բաժանումից, իսկ հայերը, մեկ ասելով, հեռու են Եվտիքեսի հարուցած շփոթից: Ըստ որում, նա ոչ մի կերպ չհամաձայնվեց հայերի ընդունած բանաձեւը փոփոխել՝ պատճառաբանելով, որ այդ կարելի է միայն Մեծ Հայքի եւ բոլոր կողմերի եկեղեցու հայրերի համաձայնության դեպքում: Հայոց հայրապետը պատրաստեց նաեւ «Ճշմարիտ դավանության» երրորդ գիրը, որտեղ քննության էր առնում միայն բնության խնդիրը: Վերջինս թվագրված է 1170-ով եւ հանձնվեց Թեորիանոսին ու Հովհաննես Ութմանին, որոնք այն տարան կայսրություն:

Թեորիանոսը Ներսես կաթողիկոսի հետ ունեցած բանակցություններն ու վիճաբանությունները գրի է առել եւ հարցը Կոստանդնուպոլսում այնպես մատուցել, թե հայերը հոժարակամ են երկու եկեղեցիների միաբանության խնդրում:

*Շարունակությունը՝ էջ 4*

## ԳԻՏԵԼԻՔ ԵՎ ԽՈՐՀՈՒՐԴ

*Սկիզբը՝ 2005-ի թիվ 11-12, 15-18, 20-22, 24, 2006-ի թիվ 1-5, 11-19*

### ԱԶԱՏՈՒՄ ՄԵՂՔԵՐԻՑ

Շատ մարդիկ այսօր տանջվում, դատապարտվում են իրենց խղճի կողմից՝ երբեմն գործած մեղքերի եւ հանցանքների համար: Դավթի օրինակը կարող է նրանց ուղղություն ցույց տալ: Դավիթն իր ամբողջ կյանքն ապրել է սրբությամբ եւ եղել Աստծո արդարը, սակայն մի ծանր մեղք կարող էր նրան զրկել այդ շնորհից, եթե չլիներ նրա զղջումն ու ապաշխարությունը: Դավիթը երիտասարդ հասակում սպանել է տալիս իր զինվոր Ուրիային՝ նրա կնոջը տիրանալու համար: Սակայն հետո, խորապես զղջալով, որ այդպես է վարվել՝ հետեւելով անցողիկ մարմնական ցանկություններին, իր ապաշխարման համար ներում է գտնում Աստծուց: Ճիշտ նույն կերպ, ովքեր տանջվում են իրենց գործած անարդարություններից կամ մեղքեր ունեն, ապաշխարության եւ զղջման դեպքում կարող են այսօր էլ քահանայի միջոցով Աստծուց ներում ստանալ եւ ապրել խաղաղ հոգով ու հանգիստ խղճով: Դավիթ թագավորը համարվում է նաեւ Քրիստոսի նախօրինակը՝ իբրեւ հաղթող եւ բարի հովիվ: Քրիստոսը, ըստ մարմնի, սերում է Դավթի սերնդից, եւ Դավթի սաղմոսներում մարգարեություններ կան Քրիստոսի մասին:

### ՃՇՄԱՐԻՏ ԿՅԱՆՔԻ ՁՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Ճշմարիտ Եկեղեցին Քրիստոսի առաքյալների հիմնադրած Եկեղեցին է: Այսօր, սակայն, բազմաթիվ մարդիկ համալրում են աղանդավորների շարքերը: Շատերդ, անշուշտ, ճանաչում եք այդպիսի աղանդավոր մարդկանց, շատերդ էլ նույնիսկ բարեկամներ եւ ծանոթներ ունեք, որոնք աղանդավորներ են: Մարդիկ հարցնում են. «Ինչո՞ւ Եկեղեցին ինչ-որ կերպ չի վերացնում մեր երկրից աղանդավորությունը»: Ըստ Նոր Կտակարանի՝ Եկեղեցին միայն քարե կառույցը չէ, Եկեղեցին միայն հոգեւորականները չեն, այլ այս ամենով հանդերձ՝ Եկեղեցին ժողովրդի հետ միասնությունն է: Շատերս՝ որպես Եկեղեցու մասնիկներ կամ անդամներ, ի՞նչ ենք արել մեզ ծանոթ մոլորյալների համար, կամ ավելին, գուցե հենց շատերս ենք եղել այդ մարդկանց շեղվածության պատճառը: Ոմն քրիստոնյա մի մեծահարուստ հեթանոսի մոտ անցնում է աշխատանքի: Հեթանոսն ասում է. «Քեզ աշխատանքի եմ վերցնում միայն այն պայմանով, որ ոչ մի խոսք չասես քո հավատի մասին»: «Հավատա, որ ոչ մի խոսք չեմ ասի»,- հավաստիացնում է քրիստոնյան: Քրիստոնյայի՝ երկու ամիս այս հեթանոսի այգում աշխատելուց հետո հեթանոսը գալիս է նրա մոտ եւ մեծ ցանկություն հայտնում քրիստոնյա դառնալու: Սա ցույց է տալիս, որ անգամ առանց որեւէ բան քարոզելու երբեմն քրիստոնյան կարող է իր վարքով անհավատի սիրտը Ճշմարիտ Աստծուն դարձնել: Սակայն ինչպիսի՞ն է եղել ձեր վարքը նախքան ձեր բարեկամի կամ ծանոթի աղանդավոր դառնալը: Արդյո՞ք ցույց եք տվել քրիստոնեական կյանք, թե՞ եղել եք անտարբեր՝ եկեղեցի հաճախելու կամ Աստվածաշունչ ընթերցելու հարցում, արդյո՞ք ավելի շատ զբաղված եք եղել Աստծուն որոնելով, թե՞ երկրային բարիքների փնտրտուքով: Կամ արդյո՞ք ներկայումս օրինակելի է ձեր կյանքը: Եթե ոչ, ուրեմն օտար երկրներին, օտար քարոզիչներին կամ մեկ այլ ուրիշի մեղադրելուց առաջ նայենք ինքներս մեզ, դառնանք իրապես քրիստոնյա, որպեսզի կարողանանք շտկել թե՛ մեր, թե՛ ուրիշների այն սխալները, որոնց պատճառը եղել է քրիստոնեական մեր անփույթ վարքն ու կյանքը:



### ՍՈՒՐԲ ԳՐՔԻ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ

Հատկանշական է մեր Եկեղեցու մեծագույն եպիսկոպոսներից մեկի՝ Մելքիսեդեկ Մուրադյան սրբազանի միտքը՝ Աստվածաշնչի ընթերցանության մասին. «Աստվածաշունչը կարող են կարդալ ամեն դասակարգի մարդիկ: Կրոնը անհատական է, ուստի եւ ամեն անհատ պարտավոր է անձամբ կարդալ Սուրբ Գիրքը: Հոմերոսի Իլիականը կամ Ոդիսականը մենք չենք կարող մանուկների ձեռքը տալ: Բայց Ավետարանը մանուկը կարող է կարդալ եւ հասկանալ»: Սուրբ Եփրեմ Ասորին՝ Հոբի գրքի իր մեկնության մեջ ասում է, որ ինչպես ճաշակելիք բաները բռնությամբ չեն մտնում մարդու բերանը, այլ մարդն ինքն է իր կամքով դրանք ընդունում եւ վայելում, ճիշտ այդպես էլ գրքերում եղած բարի բաները պետք է մարդու կամքով իմաստություն պարգեւեն մարդկային մտքին: Ամերիկացիներից մեկը մտահոգությամբ ասել է. «Մենք դարձել ենք աստվածաշնչային անգրագետների ազգ: Արագընթաց մի ուսումնասիրությամբ պարզվել է, որ թեեւ ամերիկացիների 90 տոկոսն ունի սեփական Աստվածաշունչ, սակայն քրիստոնյաների միայն 11 տոկոսն է այն ամեն օր կարդում»: Ցավոք, մեր ազգը այս տեսակետով նույն անմխիթար վիճակում է: Որքան դիպուկ է նկատել մի մեծ մտածող. «Ուր Սուրբ Գիրքը բաց չէ, այնտեղ անսահման խավար է տիրում, ուր Սուրբ Գիրքը միայն մասամբ է բաց, այնտեղ միայն օրվա արշալույսն է բացված, եւ ուր Սուրբ Գիրքն իր ազատական էջերը բացել է ժողովուրդների առջեւ, այնտեղ տիրապետում է քաղաքակրթության լուսավորումը»:

*Շարունակությունը՝ էջ 5*

## ՊԱՐՈՆՅԱՆԻ ԵՎ ՕՏՅԱՆԻ ԱԶԳԱԿԻՑ

# ԼԵՌ ԿԱՄՍԱՐԸ



Սկիզբը՝ թիվ 17-20

3.

Իր ողջության օրոք Լեռ Կամսարը հրատարակել է «Անվավեր մեռելներ» (1924), «Ազգային այբբենարան» (1926), «Վրիպած արցունքներ» (1934), «Գրաբար մարդիկ» (1959), «Մարդը տանու շորերով» (1965) *(Սա Լեռ Կամսարի կենդանության օրոք լույս տեսած վերջին գիրքն էր, որի տպագրությունը գլուխ եկավ մեծ դժվարությունների հաղթահարումով: Խմբագրվեց ու կրճատվեց անդադար, նվաղեց ու բարակեց գլավլիտի քմահաճությամբ, իսկ երբ թվում էր, թե արդեն տպագրված գիրքը ուր որ է ընթերցողին կհասնի, արգելվեց համապատասխան մարմինների կողմից՝ ծանր վիշտ ու մահացու հարված հասցնելով նրա տառապյալ հեղինակին:*

*Ժամանակին ընթերցել եմ այդ գրքի՝ տպարանից հանված եւ Հովհաննես Շիրազին նվիրված մի օրինակը, որն ուներ «Լեռից Սարին» մակագրությունը - Ս. Մ.)* գրքերը. հետմահու նրա թոռնուհու՝ Վանուհու ջանքերով հրատարակվել են «Կարմիր օրեր» (2000), «Սաստիկ կոմունիստներ» (2002) երկերը, եւ դեռ շատ ձեռագրեր ու անտիպ էջեր սպասում են հրատարակման. դեռ չենք խոսում նրա երկերի լիակատար ժողովածուն կազմելու եւ հրատարակելու հույժ անհրաժեշտության մասին: Այդ մեծ ժառանգությունը դեռեւս մասնագիտական լուրջ գնահատման չի արժանացել. իհարկե, եղել են այս կամ այն հոբելյանի առիթով ասված բնութագրական արտահայտություններ, փոքրիկ հոդվածներ, որոնք, սակայն, չեն վերածվել մեծ երգիծաբանի վաստակն արժեւորող ծանրակշիռ գիտական խոսքի: Իսկ սա նշանակում է՝ մեր գրականագիտությունը չմարած պարտք ունի Լեռ Կամսարի հանդեպ:

Պարոնյանի եւ Օտյանի ժառանգությունն ուսումնասիրողներն ունեցել են որոշակի մոտեցում եւ դիտակետ, մշակել են սկզբունքների համակարգ, ստեղծել որոշակի ավանդներ, որոնք կիրառելի են նաեւ ընդհանրապես երգիծաբանական գրականություն ուսումնասիրելու եւ արժեւորելու գործընթացում: Կամսարն իր մեծ նախորդներին ե՛ւ նման է, ե՛ւ տարբեր է նրանցից: Նման է այնքանով, որ նա եւս պատկերել է իր ժամանակի ազգային քաղաքական ու սոցիալական կյանքը, մարդկային ու հասարակական հարաբերությունները. ուրեմն Լեռ Կամսարի ժառանգությունը դասակարգելիս կարելի է թեմատիկ բաժանում կատարել՝ առանձնացնելով հիմնականում քաղաքական երգիծանքն ու սոցիալականը: Բայց այս մոտեցումը լիարժեք չի կարող լինել. որովհետեւ, ինչպես ցույց է տալիս ուսումնասիրությունը, այդ դեպքում Կամսարի ստեղծագործության բոլոր նրբերանգները չեն բացահայտվի եւ կպահանջեն նոր մոտեցումներ: Հենց միայն ժամանակի գրական կյանքը պատկերող երգիծական ստեղծագործությունները բավական են ասվածը հաստատելու համար:

Վերը տեսանք, որ հայ երգիծաբանության աստվածը, ինչպես Լեռ Կամսարն է նրան բնորոշում, Հակոբ Պարոնյանն է: Նրա ավանդները նոր պայմաններում շարունակեց ու զարգացրեց Եր. Օտյանը՝ իր հերթին բերելով բազմաթիվ նորություններ: Կենսական նոր հանգամանքներն էին այդ թելադրում. Պարոնյանի ժամանակներում դեռեւս չկային հայ ազգային քաղաքական դասական կուսակցություններ, ուստի եւ չկար կուսակցական կյանք, միջկուսակցական ու ներկուսակցական տարաձայնություններ չկային: Իսկ Պարոնյանը, հետեւողական իրապաշտ լինելով, չէր կարող չեղած բանը հորինելով պատկերել կամ երգիծել:

Օտյանը զորեղացավ քաղաքական երգիծանքի ասպարեզում ոչ թե նրա համար, որ տաղանդով Պարոնյանից բարձր էր որպես գրող ու երգիծաբան, այլ կենսական իրադրությունն էր տարբեր, ժամանակներն ու հանգամանքներն էին ուրիշ՝ ի նպաստ Օտյանի:

Եվ ոչ միայն այդ:

Հայ երգիծաբանական դպրոցի Հ.Պարոնյանն անմրցելի սրամիտ էր, անվրեպ դիտող, անխնա ու դիպուկ խարազանի շաչյուններով եւ սպանիչ ծաղրով ոչնչացնող՝ որոշակի միակողմանիությամբ: Նրա հաջորդները՝ Եր. Օտյանն ու Լեռ Կամսարը, սնվելով իրենց ուսուցչի ավանդներով եւ հաղթահարելով նրա միակողմանիությունը, բերեցին իրականության ընկալման ու երգիծական պատկերման նոր եղանակ ու մակարդակ:



Տունը, որտեղ ապրել է Լեռ Կամսարը

Այլ էր Օտյանի երգիծելու կերպը. նա, խուսափելով կարիկատուրային միակողմանի ծաղրից, գերադասում էր հեգնել եւ ծաղրում էր միայն անհրաժեշտ չափով. կիրառում էր երգիծանքի համեմատաբար մեղմ ձեւերը, ծաղրում էր՝ նաեւ արժանիքների բացորոշ գնահատումով. իհարկե, անհրաժեշտության դեպքում նրա ծաղրը ամենեւին էլ Պարոնյանից պակաս սուր եւ սպանիչ չէր: Այդպիսով գեղարվեստական պատկերը դառնում էր ավելի բնական ու ընդգրկուն: Հեղափոխության մակաբուծության, փանջունիության երեւույթների եւ առհասարակ կուսակցամոլության ծաղրը Օտյանի մեծ հայտնագործությունն էր, որը նոր՝ խորհրդային ժամանակներում ու հանգամանքներում իր հանճարեղ շարունակությունն ունեցավ Լեռ Կամսարի ստեղծագործության մեջ:

Երգիծական իր ինքնատիպ աշխարհն էր ստեղծել նաեւ Առանձարը՝ թուրքական բռնատիրության ծաղրուծանակով, նրա ճիրաններում տառապող արեւմտահայության սոցիալական կյանքի պատկերներով ու ժամանակի գրական կյանքը պատկերող նորավեպերով: Սակայն նրա երկերը, գեղարվեստական լուրջ արժանիքներով հանդերձ, չունեն ո՛չ Պարոնյանի, ո՛չ Օտյանի, ո՛չ էլ Լեռ Կամսարի սրությունն ու կենսական հարուստ բովանդակությունը:

Լեռ Կամսարը՝ իր իսկ բնորոշմամբ՝ հայ երգիծաբանության աստված կամ դիրեկտոր Պարոնյանից ու նրա տեղակալ Օտյանից հետո, յուրացնելով նաեւ նրանց ստեղծագործական փորձը, տաղանդով չզիջելով նրանց, ընկնելով միակուսակցական վարչահրամայական վտանգալից երկիր, նոր խոսք պիտի ասեր՝ հանդես բերելով նորագույն ժամանակների ավելի բարդ ու նուրբ երեւույթների հանդեպ ճկունություն, զգաստություն, դրանք խելամտորեն գնահատելու ձիրք ու կարողություն: Իսկ սոցիալիզմի երկրում ապրելու եւ հենց սոցիալիզմի թերությունները ծաղրելու համար գրողական ձիրքի, երգիծաբանական տաղանդի հետ միասին անհրաժեշտ էին հենց այն համարձակությունը, անկեղծությունն ու շիտակությունը, որոնցով այդ ժամանակներում օժտված էր միմիայն ինքը՝ Լեռ Կամսարը: Նա երբեք գլուխ չծռեց ժամանակի հողմերի դեմ, չքծնեց ուրիշների կողմից փառաբանվող որեւէ կուսակցական առաջնորդի կամ պաշտոնյայի: Նրա այս հատկությունները պարտադիր էին երգիծաբան արվեստագետի համար եւ գլխացավանք ու անասելի փորձանք՝ այդ կարգերում ապրող ազնիվ ու շիտակ մարդու համար:

*Շարունակելի*

***Սամվել ՄՈՒՐԱԴՅԱՆ***

***Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր***

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայ Առաքելական Եկեղեցու Կալկաթայի Մարդասիրական ճեմարանը հայտարարում է 7-11 տարեկան երեխաների ընդունելություն:

Ճեմարանը տասնամյա կրթական հաստատություն է, որը համապատասխանում է անգլիական միջնակարգ դպրոցի պահանջներին:

Ավարտելուց հետո երեխաները քննություն են հանձնում եւ դրական արդյունքների ու բավարար միավորների դեպքում կարող են սովորել Կալկաթայի բարձրագույն դպրոցներում՝ 11-12-րդ դասարաններում, ապա կարող են իրենց ուսումը շարունակել արտասահմանյան բարձրագույն կրթական հաստատություններում՝ հիմնականում Ավստրալիայում, Անգլիայում, ԱՄՆ-ում եւ այլն: Արտասահմանյան համալսարանների ուսման վարձը նույնպես վճարում է Եկեղեցին:

Ճեմարանը հոգում է ճանապարհածախսերը եւ երեխաներին ապահովում է կենցաղային բոլոր պայմաններով ու պիտույքներով:

Դիմումներն ընդունվում են մինչեւ սույն թվականի դեկտեմբերի 10-ը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնում:

Մանրամասն տեղեկությունների համար կարող եք զանգահարել 010 517 160 հեռախոսահամարով:

***Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժին***

## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ՆԵՐՍԵՍ Դ ԿԼԱՅԵՑԻ

## (1166-1173)

*Սկիզբը՝ էջ 3*

Համաձայն Լամբրոնացու՝ Թեորիանոսը հույներին հիացրել է Ներսեսի մասին հաղորդած իր տեղեկություններով, նրա սքանչելի վարքի մասին պատմությամբ եւ պարկեշտ ու ճգնավոր կյանքի նկարագրությամբ՝ ներկայացնելով նրան որպես խոնարհամիտ, հանգիստ, խաղաղություն փնտրող եւ սիրով օրենքներ հաստատող: Դա ինչ-որ չափով փոխեց հույների վերաբերմունքը հայերի նկատմամբ: Թեորիանոսը նաեւ հատուկ տեղեկագիր պատրաստեց, որը հունարենով պահպանվել է եւ Կղեմես Գալանոսի կողմից թարգմանվել է հայերեն: Սակայն Ներսեսը չէր կարող ծանոթ լինել դրան, քանի որ Թեորիանոսը գրեց այն վերադարձից հետո: Ուստի հազիվ թե կարող են նրա բնութագրումները Ներսեսի մասին հավաստի համարվել: Թեորիանոսի գրվածքում Ներսեսը ներկայացված է որպես տգետի մեկը, որը ո՛չ Սուրբ Գրքին է ծանոթ եւ ո՛չ էլ՝ Եկեղեցու հայրերին ու իմաստասիրության սկզբունքներին:




Մի բնության մասին կաթողիկոսի բացատրությունը համարում է մոլորություն, նզովում է Քաղկեդոնի ժողովի հակառակորդներին եւ խնդրում Կոստանդնուպոլսի պատրիարքին օրհնել հայոց ազգը, որ այդքան երկար մնացել է նզովքի մեջ: Ստացվում է, որ հայոց կաթողիկոսը մի նամակ էլ է հանձնել Թեորիանոսին, թե իբր ինքն ընդունում է Քաղկեդոնի ժողովի որոշումները: Սակայն Ներսես Շնորհալու գրվածքները հայերեն բոլորովին այդ չեն հաստատում: Թեորիանոսի կեղծիքի վրա մի բան էլ ավելացրել է Գալանոսը՝ իր ցանկացածը դնելով Ներսեսի եւ նրա յուրայինների բերանը: Գալանոսի նպատակը, սակայն, ո՛չ ավել, ո՛չ պակաս, Ներսեսին հռոմեադավանություն վերագրելն է, ինչը պարզապես անհեթեթություն է:

Վիճաբանությունների ժամանակ Ներսեսին ընկերակցել էին նրա ազգական Գրիգոր եպիսկոպոսը, որը թերեւս նրա Վասիլ եղբոր որդին է՝ Գրիգոր Տղան, Սափիրիայի (իմա՛ Իսավրիայի) եպիսկոպոս Պետրոսը, Քեսունի ասորի եպիսկոպոս Հովհաննեսը, Սահակ եպիսկոպոսը եւ Վրթանես վարդապետը: Ասվում է նաեւ, որ 200 տարի առաջ մի հայ կաթողիկոս՝ Հովհաննես անունով, եղել է քաղկեդոնականության պաշտպան, որն իբր հիշվել է Ներսեսի կողմից: Մ. Օրմանյանի կարծիքով՝ հավանաբար խոսքը վերաբերում է Վահան Սյունուն, քանի որ Վահան եւ Հովհան անունները հաճախ շփոթվում են: Անտարակույս է, որ հազիվ թե Ներսես Շնորհալին այդպես բարձրացներ գահընկեց կաթողիկոսին եւ անգամ ցույց տար նրա կողմից միաբնակների դեմ գրված գիրքը, որն իբր Գրիգոր Պահլավունին հաստատել էր: Իսկ եթե խոսքը վերաբերում է դավանաբանական գիրք գրած Հովհաննես Օձնեցուն, ապա նա ապրել էր 450 տարի առաջ, եւ գրածն էլ միաբնակների դեմ չէր:

*Շարունակելի*

***Բաբկեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ***

***Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր***

# ՀԱՅ ՀԻՆ ԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

*Սկիզբը՝ 2006-ի թիվ 15-20*

## Ուշ բրոնզի եւ վաղ երկաթի դարի՝ Ք. ա. 15-9 դդ. արվեստը

Ուշագրավ են Շամիրամի դամբարանները՝ օղակված կողքի վրա ցից դրված տուֆե սրբատաշ սալերով: Սալերի վրա բարձրաքանդակներ են, որոնք պատկերում են այծեր, եղջերուներին հետապնդող գայլեր, մարտակառքեր, հավերժության խորհրդանիշ պարույրներ, երկնային լուսատուներ, մարտի եւ որսի տեսարաններ: Դամբարանադաշտում, երբեմն նաեւ դամբարանների մեջ, հայտնաբերվել են 1,5-2 մ բարձրությամբ տուֆից կերտած ֆալլոսներ: Դամբարաններից մեկի վրա կար մարդահասակ անտրոպոմորֆ մի քանդակ, որը պատկերում էր զրահակիր զինվորի: Սա ամենայն հավանականությամբ նահապետի կամ տոհմի առաջնորդի քանդակ է՝ դրված իր դամբարանի վրա, որի շուրջ զետեղված էին տոհմի մյուս անդամների կրոմլեխներով օղակված դամբարանները, իսկ բոլորը միասին՝ վերցված էին մեկ ընդհանուր շրջանի մեջ:

Բացառիկ, համարժեքը չունեցող երեւույթ է 2-րդ հազարամյակի 2-րդ կեսի կլոր քանդակը: Ընդհանրապես, Հայաստանի հնագույն արվեստին բնորոշ ռեալիզմն այս դարաշրջանում հասնում է հիացմունքի արժանի արտահայտչականության: Մետաղապլաստիկայի նմուշները պատրաստվում են հալված վիճակում մեծ հոսունությամբ օժտված բրոնզից՝ մոմե կաղապարներով, ինչը ենթադրում է քանդակներից յուրաքանչյուրի եզակի, անկրկնելի լինելը: Քանդակները, որպես կանոն, կազմված են տարբեր կաղապարների մեջ ձուլված սնամեջ արձանիկներից եւ խարսխաձեւ պատվանդաններից: Վերջիններիս վերին հարթակների վրա զոդված են կամ անոթաձեւ հիմքերի մեջ ագուցված են մարդկանց, կենդանիների եւ թռչունների ֆիգուրներ: Բրոնզե պլաստիկային բնորոշ է խիստ որոշակի թեմատիկ պատկերաշար, որը ներկայացնում է անտրոպոմորֆ աստվածությունների, դիցաբանական հերոսների կամ նրանց խորհրդանշող, ուստի եւ պաշտվող կենդանիների (ցուլ, այծ, եղջերու) եւ թռչունների (ոսկեգույն արծիվ (բերկուտ), աղավնի եւ այլն): Թռչնակերպ արձանիկների ներսում տեղադրված բրոնզե գնդիկները, յուրաքանչյուր ցնցումից պատերին զարկվելով, ախորժալուր զնգոց են արձակում: Արձանիկներն ամրացվել են գավազանների, զինանշանների (շտանդարտ) եւ մարտակառքերի վրա: Ուշագրավ խումբ են կազմում դիցաբանական սյուժեներով խմբաքանդակները, որոնց կոմպոզիցիաներին բնորոշ է ռիթմիկ հավասարակշռությունը: Առանձնանում են երկձի եւ երկանիվ մարտակառքերի մոդելները, որոնց թափքերին կանգնած ռազմիկների իրանների դիրքը մեզ են հաղորդում մարտակառքի սրարշավ ընթացքի զգացողությունը:

Գեղարվեստական քանդակագործության իսկական գլուխգործոցներ են Տոլորսի եւ Արթիկի դամբարաններից հայտնաբերված եղջերվի ու այծի խրոխտ ու վեհապանծ արձանիկները: Լոռի բերդի հարուստ եւ բազմաբնույթ մետաղապլաստիկայում բացառիկ տեղ է գրավում մորուքավոր զինվորի քանդակը՝ ազդրերի վրա ճանկախաչեր (սվաստիկա): Լայնաթիկունք, նեղ մեջքով եւ հզոր ազդրերով քանդակը կարծես նախանշում է հետագայում հունական գեղարվեստում կանոնիկ դարձած արական գեղեցկության հիմնադրույթները: Նույն Լոռի բերդում է գտնվել երեք գայլերի կողմից եղջերվի եւ մայր եղնիկների հետապնդման տեսարանը պատկերող խմբաքանդակը, որն աչքի է ընկնում կերպարների ռեալիզմով եւ պլաստիկայի կատարելությամբ: Համաշխարհային արվեստի կարեւորագույն հուշարձաններից է Շիրակավանի դամբարաններից մեկում գտնված հերոսի քանդակը՝ շղթայակապ, սարսափազդու գիշատիչ խոշոր գազանի (առյուծ կամ մարտական գամփռ) հետ: Զուսպ, սակայն խիստ արտահայտիչ ոճը, հատկանիշների շեշտումը մեզ են ներկայացնում հերոսի եւ գազանի ահռելի ուժով օժտված կերպարները: Ամենայն հավանականությամբ՝ այն հանդիսանում է հայկական էպոսի սիրված հերոսներից մեկի՝ առյուծաձեւ Մհերի նախատիպը:



Հայաստանի՝ ուշ բրոնզի դարի կլոր քանդակագործության ռեալիստական նմուշները խիստ տարբերվում են համաժամանակյա խուրիմիտանական եւ միջագետքյան ֆանտաստիկ ու սարսափազդու կուռքերի պատկերագրությունից, ինչը, մեր կարծիքով, պայմանավորված է էթնիկական, գաղափարագեղագիտական եւ կրոնաբարոյական նորմերի տարբերությամբ: Դրա փոխարեն նրանք մեծ նմանություն ունեն Ք. ա. 3-րդ հազարամյակի նախախեթական (Ալաջա-խույակ, Խորոզ-թեփե) եւ շումերական (Ուր) պլաստիկայի հետ:

Վաղ երկաթի դարում մետաղապլաստիկան ավելի փոքր չափերի է, իսկ պատկերները դառնում են սխեմատիկ, սակայն բավականին արտահայտիչ եւ դինամիկայով օժտված: Հանդիպում են մարտակառքերի մոդելներ, կանանց եւ տղամարդկանց, ինչպես նաեւ շների, այծերի, ձիերի, եղջերուների եւ թռչունների արձանիկներ (Պառավաքար, Այրում, Արծվաքար): Բոլոր արձանիկներն էլ ունեն ծիսահմայական նշանակություն եւ մարմնավորում են կոնկրետ դիցաբանական կերպարներ՝ կապված բնության ուժերի, պտղաբերության, չարի եւ բարու հակամարտության, կյանք-մահ-վերածնունդ գաղափարների հետ: Արձանիկները կերտված են հանդիսավոր եւ վեհապանծ դիրքով, ունեն ստատիկ հանդիսավոր կեցվածք, որոնք բնորոշում են կենդանիների ու գազանների վայրի ու մոլեգին ուժը, նրբագեղությունը, արագավազությունը, հերոսների ատլետիկ կազմվածքը եւ այլն: Առանձնապես տպավորիչ են մերկիրան, գլխներին սաղավարտ, աջ ձեռքին երկար նիզակ, ձախին՝ վահան բռնած առասպելական հերոսների կամ աստվածությունների քանդակները:

Արվեստի առանձնահատուկ բնագավառ է բրոնզե գոտիների պատկերագրությունը: Բրոնզե լայն թիթեղների վրա փորագրման տեխնիկայով պատկերված են սրբազան բեղմնավորման, դիցաբանական եւ կենցաղային, մարտի ու որսի տեսարաններ: Կենտրոնական սյուժեն, որպես կանոն, շրջափակում է գոտու եզրով երկու-երեք շարք ձգվող եզրագոտին (բորդյուր)՝ եռեւնազարդը կամ «վազող գալարները», ինչը խորհրդանշում է արեւի հավերժական շարժումը: Փորագիր կերպարներն ունեն հանդիսավոր-ստատիկ դիրք կամ ընդգծված պլաստիկ շարժունություն: Իրական պատկերներին զուգընթաց, մեծ տեղ են գրավում մարդկանց եւ կենդանիների ֆանտաստիկ ֆիգուրները: Հայաստանի տարբեր հուշարձաններից գտնված հարյուրավոր գոտիներից առանձնանում են Լճաշենի, Ստեփանավանի, Աստղի բլրի, Բջնիի, Կարմիր բերդի դամբարաններից հայտնաբերված օրինակները: Առանձնապես տարածված են եղջերուների, այծերի, թռչունների, երկնային լուսատուների, առյուծադեմ մարդկանց եւ եղջերավոր ձիերի պատկերները:

Ըստ Ստեփան Եսայանի՝ Հին Հայաստանի, Առաջավոր Ասիայի եւ Կովկասի կերպարվեստում մեծ տեղ են գրավում ֆանտաստիկ էակները, որսորդական ու մարտի տեսարանները, որոնք պատկերված են ուշ



բրոնզի եւ վաղ երկաթի դարի բրոնզի գոտիների վրա: Լճաշենի երեք բրոնզե գոտիները պահպանվել են գրեթե ամբողջությամբ: Դրանք եզերված են «վազող» գալարների եռաշարք գոտիներով, որոնք, ըստ Ս. Եսայանի, խորհրդանշում են արեւի հավերժական պտույտը: Գոտիներից երկուսի «բորդյուրների» ներսի տարածքը բաժանված է հատվածների, որոնք զարդարված են ճանկախաչերով (կեռխաչերով), սեպաձեւ եւ շեղանկյուն նախշերով, սուրացող եղնիկների ու այծերի պատկերներով, թռչունների ֆիգուրներով: Նրբագեղ եղջյուրներով կենդանիների սրընթաց վարգն արտահայտված է առջեւի ոտքերի առաջ մեկնված եւ ետեւի ոտքերի քիչ ծալված դիրքով: Այս գոտիների բոլոր կենդանիներն ունեն սխեմատիկ պատկերագրություն՝ ընդգծված են միայն կլոր եւ խոշոր աչքերը եւ տարբերվում են հյուսիսային Հայաստանի մյուս գոտիների պատկերագրությունից: Լճաշենի առաջին գոտին, թերեւս, պատկերում է սրբազան բեղմնավորման տեսարան, որտեղ արու այծը հետապնդում է հինգ էգ այծերի: Կենդանիների վերեւում հանդիպակաց ճախրող թռչունները, որոնք, ըստ Ս. Եսայանի, խորհրդանշում են երկնքի աստծուն, արեւն ու պտղաբերությունը, կարծես օրհնում են արգասավորությունը, խոչընդոտում են էգ այծերի վարգին եւ նպաստում պտղաբերության ակտին: Երկրորդ գոտու վրա փորագրված սուրացող այծերին եւ եղնիկներին ընդառաջ թռչող փետրավորները կտցահարում են նրանց: Ընդունված տեսակետի համաձայն՝ սա մոգական մի պատկեր է, որտեղ ներկայացված են զոհաբերության կենդանիները:

*Շարունակելի*

***Հակոբ ՍԻՄՈՆՅԱՆ***
***Պատմական գիտ. թեկնածու, արվեստաբանության դոցենտ***

# ԳԻՏԵԼԻՔ ԵՎ ԽՈՐՀՈՒՐԴ

*Սկիզբը՝ էջ 3*

Եվ Սուրբ Գրքի ընթերցանության հետ կապված խավարը կամ լուսավորությունը ոչ միայն ժողովուրդներին է վերաբերում, այլեւ առանձին անհատներին եւ հատկապես ընտանիքներին: Աշխարհում բազմաթիվ ընտանիքներ այսօր տարբեր տեսակի նեղությունների մեջ են: Եվ մարդիկ կգտնվեն, ովքեր կհարցնեն. «Եթե Սուրբ Գիրք ընթերցեմ, արդյո՞ք այդ դեպքում երկնքից բարիքներ պիտի թափվեն իմ եւ իմ ընտանիքի վրա»:

Ավետարանը պատրաստի պատասխաններ չի տալիս մարդկանց խնդիրներին: Այն ավելի շուտ լուծում է այդ խնդիրները՝ նախ մարդուն փոխելով: «Բայց իմ ուզածը դա չէ,- կպատասխանի մարդը,- ինձ անհապաղ շոշափելի արդյունքներ են պետք»: Սակայն նման առարկության պատասխանը տալիս է չինական իմաստուն մի ասացվածք. «Մարդուն ձուկ տուր, եւ կկերակրես նրան մեկ օր: Սովորեցրու մարդուն ձուկ որսալ եւ կկերակրես նրան ամբողջ կյանքի ընթացքում»: Այսպես մարդուն փոխելով՝ մարդու ողջ կյանքն են ապահովում Աստվածաշունչը եւ Եկեղեցին: Եվ իմանալով այս հիանալի իրողությունը՝ ընթերցենք Աստվածաշունչը, եթե իրոք ցանկանում ենք երջանիկ լինել:

## ՏՆՕՐՀՆԵՔ

Ծննդյան տոնի գեղեցիկ շարականը սկսվում է «Խորհուրդ մեծ» բառերով: Այս շարականը երգվում է նաեւ տնօրհնեքի արարողության ընթացքում: Ծննդյան տոնից հետո քահանաներն այցելում են տները, Քրիստոսի Ծննդյան ավետիսը տալիս եւ տնօրհնեք կատարում: Այս արարողությունն օրհնությամբ է լցնում տներն ու ընտանիքները: Քանի որ անչափ դժվար է քահանաներին այդ օրերին բոլոր տներն այցելել հատկապես մայրաքաղաքում, ուստի անհրաժեշտ է, որ մարդիկ իրենց ընտանիքների եւ իրենց տների օրհնության համար իրենք եւս ընդառաջ գան եւ որեւէ եկեղեցի այցելելով՝ խնդրեն քահանային տնօրհնեք կատարել:

*Շարունակելի*

***Տ. Ադամ քհն. ՄԱԿԱՐՅԱՆ***

## ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի նոյեմբերի 2-3-ը Մոսկվայում տեղի ունեցավ «Միջազգային քրիստոնեական դիակոնիայի միջոցները» միջազգային խորհրդակցություն՝ կազմակերպված Մոսկվայի պատրիարքարանի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի եւ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի Արեւելյան Եվրոպայի գրասենյակի կողմից:

Հանդիպմանը մասնակցեցին եկեղեցիների եւ Կլոր սեղանների 25-ից ավելի ներկայացուցիչներ Ալբանիայից, Բելառուսից, Ուկրաինայից, Հայաստանից, Չեխիայից, Ռումինիայից, Ռուսաստանից, Շվեդիայից, Ֆինլանդիայից, Սկոբիայից եւ Մոլդովայից:

Հայաստանը ներկայացնում էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի վարիչ եւ ԵՀԽ Հայաստանյան Կլոր սեղանի հոգաբարձուների խորհրդի անդամ հոգեշնորհ Տ. Հովակիմ վրդ. Մանուկյանը եւ Կլոր սեղան բարեգործական հիմնադրամի տնօրեն Կարեն Նազարյանը:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին Արեւմտյան Եվրոպայում քրիստոնեական դիակոնիայի ներկայիս վիճակի եւ եկեղեցիների միջեւ համագործակցության մեխանիզմների մասին: Օրակարգում կենտրոնական տեղ էին զբաղեցնում մարդու իրավունքների եւ արժանապատվության ուղղափառ ընկալումը, ինչպես նաեւ նոր դաշինքի՝ «Եկեղեցիների համատեղ գործունեություն-զարգացում» կազմակերպության (ACT-Development) հիմնադրումը, որը փորձում է խրախուսել եկեղեցու ծառայությունը զարգացման բնագավառում:

Նոյեմբերի 2-ին խորհրդակցությանը միացավ նաեւ Մոսկվայի պատրիարքարանի Միջեկեղեցական հարաբերությունների նախագահ Կալինինգրադի եւ Սմոլենսկի Մետրոպոլիտ Կիրիլը՝ շեշտելով, որ էկումենիկ ջանքերը պետք է ուղեկցվեն եկեղեցու հոգեւոր խնամքով ու առաջնորդությամբ: Նա կարեւորեց ԵՀԽ-ի մասնակցությունը կազմակերպության հետա-
«Եկեղեցիների համատեղ գործունեություն-զարգացում»
գա գործընթացին:

***Մայր Աթոռ Ս. Էջմիածնի***
***Միջեկեղեցական հարաբերությունների բաժին***

**Կից սենյակում**

# «ՈՒՐԱԽԱՐԱՐ» ՍԳՈ ԲԵՐԿՐԱՆՔԸ

## Մեր հյուրն է Ջրվեժի Սբ Կաթողիկե եկեղեցու հոգեւոր հովիվ Տ. Կյուրեղ քհն. ՏԱԼՅԱՆԸ

**- Ըստ Մատթեոսի Ավետարանի՝ Տիրոջ երանության երկրորդ հասցեատերը սգավորներն են: Ո՞ր սգավորների եւ ի՞նչ սուգի մասին է խոսքը:**

- «Լերան քարոզում» շատ բաներ են տարօրինակ թվում այն մարդկանց, ովքեր չեն ճանաչում Աստծուն, չգիտեն՝ ինչ է քրիստոնեությունը. մարդկային ընկալումներն ու չափանիշները ճիշտ հակառակն են թելադրում: Մարդ արարածը սովորաբար երանի է տալիս նրանց, ովքեր ուրախ են, երջանիկ կամ հարուստ, հոգսեր չունեն եւ քեֆ են անում: Եվ սա համարվում է երանելի վիճակ, ու մարդիկ նախանձում են այդպիսի կյանքով ապրողներին:

Եվ հանկարծ... «Երանի՜ սգավորներին», ասում է մեր Տերը եւ ավելացնում. «...որովհետեւ նրանք պիտի մխիթարվեն»:

Այո՛, երանի՜ սգավորներին... Որովհետեւ արարչագործության պսակը՝ մարդը, այնքան եւ այնպիսի կորուստներ է ունեցել՝ Եդեմի պարտեզից սկսած, որ պարզապես չի կարող չսգալ. կորցրել է Աստծո տեսությունը, ֆիզիկական եւ մտավոր կարողությունների մեծագույն մասը, տեր լինելու պարգեւը եւ այլն, եւ այլն: Եվ ինչո՞վ պիտի ուրախանա այսքան աղքատացած, անկյալ վիճակում հայտնված եւ այս ամենը խորապես գիտակցող մարդը: Նա պիտի սգա ու ողբա իր մեղավոր վիճակի համար, Աստծո նմանությունից ու պատկերից շեղվելու, այդ պատկերն աղավաղելու համար, այն բանի համար, որ հավիտյանս դատապարտված պիտի լիներ գեհենի տանջանքներին, եթե չլինեին Աստծո ողորմածությունն ու ներողամտությունը:

Մյուս կողմից՝ նայե՛ք մեր շուրջը եւ տեսե՛ք՝ շա՞տ բան կա ուրախանալու. անիմաստ պատերազմներ, մարդկային անհամար զոհեր, բռնություններ... Եթե մենք այս մարդկության մի մասնիկն ենք, ապա ամեն մի ողբերգություն՝ լինի դա մեր մերձավորի դժբախտությունը, թշվառ, ընկած վիճակը կամ մեկ այլ ցավագին երեւույթ, միեւնույն է, չի կարող մեզ չվշտացնել: Սուրբ Գրքից մենք գիտենք, թե ինչպես Աբրահամը, Մովսեսը աստվածաշնչյան մյուս պայծառ հերոսները շատ հաճախ սգում ու ողբում էին ոչ միայն իրենց, այլեւ իրենց հարազատ ժողովրդի, իրենց շրջապատող մարդկանց մեղքերի համար: Նման սուգն ու տրտմությունը ցանկալի են ու ամոքիչ. դրանք մարդուն մղում են ապաշխարության, Աստծուց ողորմություն ու մխիթարություն հայցելու: Հիշո՞ւմ եք՝ մեր Տերը դեռ Իր տանջանքներից, խաչվելուց ու համբարձվելուց առաջ աշակերտներին, հետեւաբար նաեւ մեզ խոստացավ, որ որբ չի թողնի, կգա մեզ մոտ: Ասաց. «Ես պիտի աղաչեմ Հորը, եւ Նա մի այլ Մխիթարիչ (իմա՝ Սուրբ Հոգի) պիտի տա ձեզ, որպեսզի հավիտյան ձեզ հետ բնակվի» (Հովհ. ԺԴ 16): Ճշմարտության Հոգին է դա եւ՝ Մխիթարիչը: Ինչո՞ւ հենց մխիթարիչ. որովհետեւ մարդն ամենից առաջ մխիթարության կարիք ունի: Այլապես եթե Սուրբ Հոգու մխիթարությունը չլիներ, ապա անաչառ հայացքով ինքն իրեն, իր շրջապատը, մարդկության ընթացքը եւ աշխարհի այսօրվա վիճակը քննող, զգայուն ու խելացի մարդը չպիտի կարողանար դիմանալ, պիտի ցնորվեր... Իսկ ինչպե՞ս է մխիթարում. նախ եւ առաջ հիշեցնելով, որ մեր Տերը եւ Փրկիչը, Ով մե՛ր մեղքերի համար խաչվեց, անսահման ողորմած է, որ «ով ներում է, ներում պիտի գտնի Աստծուց, եւ ով տալիս է, պիտի տրվի նրան» (հմմտ. Ղուկ. Զ 37-38): Եվ եթե ողորմություն ես խնդրում, եթե վստահում ու ապավինում ես Տիրոջը եւ անկեղծ ու բեկված սրտով Նրա օգնությունն ես հայցում, ապա Աստված, որ ողորմած Հայրն է բոլորիս, մի օր պիտի քեզ ողորմի:

**- Տե՛ր հայր, հետեւաբար կարելի՞ է ասել, որ կորուստներից մեծագույնի՝ Աստծո, հոգեւորի կորստյան գիտակցությունն է մարդուն բերում «երանելի սգավորի» վիճակին:**

- Անկասկա՛ծ: Եվ, այնուամենայնիվ, նայելով մեր շուրջը՝ տեսնում ենք, որ մարդիկ այս աշխարհի կասկածելի եւ ունայն արժեքների համար ավելի շատ են սուգ անում. մեկը պաշտոնն է կորցրել, մյուսը դրամական կորուստ է ունեցել, մեկ ուրիշը սուգ է անում աղքատությունից կամ նախանձից եւ այլն: Նման վշտի ու տրտմության մասին առաքյալն ասում է. «Աշխարհի տրտմությունը մահ է առաջ բերում» (Բ Կորնթ. Է 10): Նման սուգը մարդուն խեղճացնում ու նսեմացնում է, ավելին՝ մղում է մահացու մեղքերի՝ նախանձի, բարկության, փառասիրության... Այս մարդիկ, անշուշտ, որեւէ կապ չունեն «երանելի սգավորի» հետ, եւ սրա՛նց մասին է, որ Տերն ասում է. «Թող որ մեռածնե՛րը թաղեն իրենց մեռելներին» (Ղուկ. Թ 60):

Եվ ընդհակառակը, «Տրտմությունը, ըստ Աստծու ուզածի, ապաշխարություն է առաջ բերում փրկության համար» (Բ Կորնթ. Է 10): Սա արդեն Տիրոջ «երանելի սգավորն» է, որի համար գերագույն արժեքն Աստված է, գերագույն կորուստը՝ Աստծուն կորցնելը, որի համար միայն արժե սգալ:

**- Եկեղեցու հայրերը նման սուգն անվանում են «ուրախարար»: Մի՞թե սուգն ընդհանրապես կարող է ուրախարար լինել:**

- Թվում է՝ իրարամերժ գաղափարներ են, չէ՞: Սակայն՝ միայն առաջին հայացքից: Իրականում ամեն ինչ ճիշտ է ասված, եւ զարմանալի ոչինչ չկա: Դրանում հեշտությամբ կհամոզվենք, եթե ընդամենը հետեւենք մարդկային հոգու «ընթացքին». ճշմարիտ կամ հոգեւոր սուգը, ինչպես ասվեց, մղում է ապաշխարության, իսկ ապաշխարելու կարող, իր մեղքերը գիտակցող եւ խոստովանող մարդն Աստծուց որողմություն է ստանում, ներում է ստանում, եւ այդ ստացածը խաղաղեցնում է նրան՝ շնորհելով իսկական, հոգեւոր ուրախություն: Ահա թե ինչու են հայրերն ասում «ուրախարար սուգ»:

**- «Դժբախտ» հասկացությունը, որ գլխավորապես աշխարհիկ հասկացություն է, որեւէ ընդհանրություն ունի՞ «Լերան քարոզի» սգավորի հետ:**

- Ոչ մի ընդհանուր եզր: Ճիշտ հակադիր ուղղություններով են գործում այս երկու վիճակները. մեկը՝ դեպի կյանք, մյուսը դեպի մահ է տանում: Սովորաբար մարդիկ դժբախտ են համարում աղքատին, տնանկին կամ, ասենք, մեկին, որի հետ մի անցանկալի բան է կատարվել, օրինակ՝ կորցրել է հարազատին: Բայց նույնիսկ նման վիճակի համար մեր Տերն ունի հրաշալի եւ ճշմարիտ դեղատոմս: Ասում է. «Խնջույքի տուն գնալուց լավ է սգո տուն գնալը, որովհետեւ դա է ամեն մարդու վախճանը, եւ դա կենդանի մարդու սրտին բարություն է տալիս» (Ժող. Է 3): Կարո՞ղ եք ցույց տալ զվարճության, ուտել-խմելու մի արարողություն, որի ընթացքում մարդկանց սրտերը թափանցի որեւէ հոգեւոր խոսք, որեւէ հոգեւոր իրողություն: Մինչդեռ նույնիսկ այս աշխարհի իմաստով սգո վայրում մարդկանց սրտերն ավելի պատրաստ են լինում հոգեւորի ընկալմանը, որը հետագայում կարող է ծիլ տալ ու պտղաբերել:

**- Երանի տալով սգավորներին՝ Հիսուսն ավելացնում է. «...որովհետեւ նրանք պիտի մխիթարվեն»: Ե՞րբ պիտի մխիթարվեն:**

- Այո՛, շատ կարեւոր է՝ երբ: Նրանք մխիթարվելու են թե՛ այս կյանքում եւ թե՛ առավել եւս՝ հավիտենականում: Այնտեղ, եթե Աստված կամենա մի օր Երկնքի արքայության արժանացնել, մենք ինքնըստինքյան մխիթարված կլինենք: Բայց մեր Տերը, իմանալով մարդկային մեր տկար բնությունը, նաեւ ա՛յս կյանքում է մեզ մխիթարում:



Մխիթարիչ Սուրբ Հոգին մեզ հենց ա՛յս կյանքի համար է ուղարկված, նաեւ՝ հիշեցնելու Տիրոջ բոլոր խոստումները, Նրա՝ Ողորմած եւ Փրկիչ լինելը: Հիշո՞ւմ եք՝ «...Նա ձեզ ամեն բան կուսուցանի եւ ձեզ կհիշեցնի այն ամենը, ինչ ես ասացի ձեզ» (Հովհ. ԺԴ 26):

**- Ինչպե՞ս կամ ինչո՞վ կարելի է մխիթարել մեկին, որը կորցրել է ինքնարտահայտման կամ հոգեւորապես կայացման հիմնական (գուցե միա՞կ) հնարավորությունը, որով նա քայլում է դեպի Աստված: Ասենք՝ նկարչին, որը կորցրել է տեսողությունը:**

- Իհարկե, շատ դժվար է: Բայց նույնիսկ այդ վիճակում, հավատացե՛ք, մխիթարվելու շատ բան կա. կյանք ունի, չէ՞, այդ մարդը, մի՞թե արդեն որոշակի մխիթարություն չէ: Նաեւ՝ հարազատներ, ընկերներ: Իսկ դեպի Աստված տանող ճանապարհը երբեք միակը չի լինում:

**- Պողոս Ադրիանուպոլսեցին ասում է. «Մարդիկ հաջողության կորստի համար տրտմում են, իսկ անմեղության կորստի համար՝ բնավ»:**

- Ցավոք, այսօրվա մարդը դրանք վաղուց արդեն կորուստ էլ չի համարում: Կորուստ չի համարում նույնիսկ Աստծուն կորցնելը, էլ ո՛ւր մնաց՝ անմեղությունը: Այնինչ 2-րդ «երանիի» գլխավոր իմաստը հենց Աստծուն կորցրած լինելու սուգն է: Մարդը հեռացել է Աստծուց, եւ սա մեծագույն սուգը պիտի լիներ նրա համար: Իսկ ի՞նչ կարող ենք գտնել, եթե Աստծուն ենք կորցրել: Չկա՛ երկրորդ Ճշմարտություն. ուրեմն՝ Ճշմարտության փոխարեն կարող ենք գտնել միայն... Կեղծիք: Ուրեմն՝ եռիցս երանի՜ ճշմարիտ սգավորներին:

*Հյուրընկալեց*
*Հայկ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԸ*

**ՎԱՆԱՀԱՅՐ ԵՎՄԵՆԻ**

# ՀԱՐՑԵՐ ԻՆՔՆ-ՔԵԶ

*Սկիզբը՝ թիվ 19-20*

61. Ինչպե՞ս են իմ հետաքրքրություններն ու պարտականությունները զուգորդվում միմյանց:

*Հատկապես անպատասխանատվության այնպիսի կողմնորոշման դեպքում, երբ պարտականությունը «տաղտկալի ծանրություն է» թվում ու պետք է դրանից արագորեն ազատվել, որպեսզի ձեռնամուխ լինես «սիրելի գործին»: Հենց այդ ժամանակ էլ ծնվում է անպատասխանատվության սիրելի դուստրը՝ անբարեխղճությունը:*

62. Արդյոք ընդունա՞կ եմ անճկատ անել ծանր գործ՝ ի բարօրություն այլոց (ընտանիքում, վանքում)՝ չակնկալելով դրա համար ո՛չ գովեստ եւ ո՛չ էլ շնորհակալություն:

63. Որքա՞ն հաճախ եմ հաջորդ օրվան թողնում այն, ինչ կարելի է այսօր անել:

64. Արդյոք իմ իրերից ամեն մեկն ո՞ւնի իր մշտական տեղը: Որքա՞ն հաճախ եմ իմ տանը, անգամ, գրպանումս կամ պայուսակումս կորցնում իրեր: Արդյո՞ք ավելորդ իրեր շատ ունեմ եւ ինչպե՞ս եմ դրանցից ազատվելու:

*Մեր մերձավորները մեր հայելին են, որոնցում մեր արտացոլումն է: Հենց դրա համար էլ բարի մարդը բոլորին բարի է տեսնում. գոռոզին թվում է, թե բոլորը հենց միայն փորձում են դիպչել իր ինքնասիրությանը. չարը բոլորի մեջ տեսնում է ագահություն. վհատին թվում է, որ անգամ բնությունն է փխատվում... Անպատասխանատուն այս ամենից ճանաչեց շատ մարդկանց. գրեթե բոլորին, բացի իրենից:*



65. Արդյոք գիտակցո՞ւմ եմ, որ օգտակարը միշտ չէ, որ պետք է հաճելի լինի:

66. Արդյոք չարչարվո՞ւմ եմ, երբ դա անհրաժեշտ է, երբ թվում է, թե «այլեւս ուժ չկա», թե՞ նույն պահին, մի թեթեւ տկարություն զգալով, ինձ՝ սիրելիիս, ուղարկում եմ հանգստի:

67. Շուն, կատու կամ այլ կենդանիներ պահո՞ւմ եմ, իսկ հետո, երբ նրանք դադարում են կենդանի խաղալիք լինելուց եւ պահանջում են ուշադրություն, ուղղակի փողոց եմ նետում կամ մոռանում կերակրել:

68. Արդյոք ձգտո՞ւմ եմ ինձ շրջապատող աշխարհը դարձնել ավելի բարի եւ գեղեցիկ, թե՞ սովոր եմ միայն օգտվել իմ շուրջն եղած Աստծու պարգեւներից եւ մարդկային ջերմությունից:

69. Արդյոք խոստովանության ժամանակ զղջացել եմ իմ անպատասխանատվության համար:

*Ցավոք, հազվադեպ է պատահում, որ քրիստոնյաները խոստովանեն, թե՝ «Ես անպատասխանատվությամբ եմ վարվում իմ աշխատանքային ժամանակի հանդեպ, անպատասխանատու եմ իմ պարտականություններում՝ ամուսնու (կնոջ) եւ ծնողների հանդեպ. անպատասխանատու կերպով վատնում եմ ժամանակս՝ փոխարենը զբաղվելու իմ հոգեւոր աճով եւ իմ ընթացիկ կյանքի պարտականություններով»: Մինչդեռ առանց այս գիտակցության ինչպե՞ս կարելի է առաջ ընթանալ:*

*Ռուսերենից թարգմանեց*
*Քնարիկ ՂԱԶԱՐՅԱՆԸ*

ԻՈՀԱՆ ԱՐՔ. ՍԱՆ-ՖՐԱՆՑԻՍԿԻ (ՇԱԽՈՎՍԿՈՅ)

# ՓՈՔՐ ՄԵՂՔԻ ՀԱՅՑՆՈՒԹՅՈՒՆ

*Սկիզբը՝ թիվ 20*

Մարդկությունը, ինչպես եւ յուրաքանչյուր մարդ, մեղքով սպանում է ինքն իրեն: Չարով փոթորկվելով, ալեկոծվելով, ցածր բնազդներին ազատություն տալով՝ մարդկությունն իր համար սարսափելի ճակատագիր է պատրաստում, ինչպես եւ ցանկացած մարդ, ով ընթանում է այս ճանապարհով: Քամի սերմանողները փոթորիկ կհնձեն: Եվ ահա այս միակ կարեւոր բանի մասին «ժամանակ չկա» մտածելու... «Ապրիր վայրկյանով», «ինչ լինում է, թող լինի»,- հոգին ձեռքը թափ է տալիս ճշմարտության վրա, որը նրա ներսում ասում է, որ պետք է մտնել ներս, կենտրոնանալ, սեփական սրտի կապվածությունները զննել եւ մտածել այն մասին, ինչը վիճակվելու է հավիտենության մեջ: Աշխարհի Արարիչը հրամայել է մարդուն հոգալ միայն օրվա մասին, իսկ աշխարհը հրամայում է հոգալ միայն «վայրկյանի» մասին՝ մարդուն խորասուզելով ամբողջ կյանքի հոգսերի ծովի մեջ:

Բառոյապես փոքրի մասին թեման ամենեւին էլ անէական չէ: Այստեղ իր արտացոլումն է գտնում Աստծո հայտնութենական հանդիմանությունը քրիստոնեական աշխարհին, որ նա «մոռացել է իր առաջին սերը»: Որքան ավելի մաքուր ու բառոյապես բարձր է մարդուց այժմ նույնիսկ այն խախտված բնությունը, որից ստեղծվել է նրա մարմինը: Որքան մաքուր է քարը, որ պատրաստ է աղաղակելու մարդկանց դեմ, որ Աստծուն փառք չեն տալիս. որքան մաքուր են ծաղիկները, ծառերը կյանքի իրենց հրաշալի շրջանակում, որքան փառահեղորեն հնազանդ են Արարչի օրենքներին գազաններն իրենց մաքրության մեջ: Աստծո բնությունը չի ծխում, իրեն նարկոզի չի ենթարկում, անառակություն չի գործում, Աստծուց տրված պտղին չի թունավորում: Անբան բնությունը սովորեցնում է մարդուն, թե ինչպես է պետք կրել Աստծուն հնազանդվելու խաչը այս աշխարհի բոլոր փոթորիկների եւ տանջանքների մեջ: Մարդը պիտի խորհի այս մասին:

Որոշ մարդիկ կարծում են, թե այս երկրի վրա կատարվող որեւէ բան ոչ մի հետեւանք չի ունենալու: Իհարկե, անմաքուր խղճի տեր մարդուն հաճելի է այսպես մտածել: Սակայն ինչո՞ւ ինքնախաբեությամբ զբաղվել. վաղ թե ուշ նա ստիպված կլինի տեսնելու արարչության մաքրության շլացուցիչ գաղտնիքը:

Մենք ինքներս մեզ զգում ենք իբրեւ «կյանք»: Մի՞թե մենք մեզ այնքան ցածր ենք գնահատում եւ այնքան մակերեսայնորեն հասկանում Նրան, ով ստեղծել է աշխարհները, որ մտածենք այս երկրային կյանքի ունայնության մասին իբրեւ մարդու գոյության: Մենք շատ ավելին ենք եւ առավել բարձր նրանից, ինչը մենք սովորել ենք այս երկրի վրա համարել ոչ միայն մեր կյանքը, այլեւ մեր իդեալները: Սակայն մենք հողի մեջ դրված ցորենահատ ենք: Ուստի այժմ մենք չենք տեսնում տիեզերքի վերին շերտը՝ բնության այն իրական պատկերը, որը կբացվի մեր աչքերի առաջ այսպես կոչված մահվան պահին, այսինքն՝ բոլորի համար էլ շատ շուտով:

Ի՞նչ է մահը: Մահը բնավ էլ դագաղը չէ, պատանքը չէ, ձեռքի վրայի սեւ ժապավենը չէ, գերեզմանը չէ: Մահն այն է, որ մեր կյանքի ծիլը դուրս է գալիս երկրի երես եւ կանգնում Աստծո արեգակի ուղիղ ճառագայթների տակ: Մեռնել եւ կյանքի ցորենահատն աճեցնել պետք է արդեն այստեղ՝ հողում: Դա ավետարանական այսպես կոչված «հոգով ծնունդն» է, մարդու «երկրորդ ծնունդը»: Իսկ մարմնի մահը ծիլի՝ հողը թողնելն ու երկրից դուրս գալն է: Ամեն մարդու, ով «իր ներսում» ընդունել է հոգեւոր թեկուզ ամենաասակավ խմորը, ավետարանական թեկուզ ամենաաննշան մարգարիտը, բնավ էլ մահ չի սպասում: Իսկ հոգով մեռածների համար, իհարկե, դագաղը, գերեզմանը, սեւ ժապավենները՝ այս ամենը, իրականություն են: Եվ նրանց հոգին չի կարողանա դուրս գալ իրական կյանքի մակերեւույթ, քանի որ նրանք երկրի վրա չեն մեռել իրենց անձի եւ իրենց մեղքերի համար:

Որպես հավկիթ՝ մենք մյուս աշխարհի առաջ փակված ենք մարմնի բարակ կճեպով: Եվ մեր կճեպները պայթում են մեկը մյուսի հետեւից... Երանելի է այն մարդը, ով դուրս կգա իբրեւ մյուս աշխարհի համար ձեւավորված, կենդանի օրգանիզմ: Լացի արժանի է նրա վիճակը, ով կլինի իբրեւ անձեւ հեղուկ... եւ նույնիսկ գարշելի՝ իր բարոյական հոտով:

Այստեղ՝ երկրի վրա, մենք իսկապես հոգու խավարի մեջ ենք, նրա «արգանդում»: Եվ արդյոք հանցագործություն չէ՞, լինելով այսպիսի վիճակում, չպատրաստվել սեփական իրակա՛ն ծննդյանը, այլ սեփական խավարը համարել կամ կյանքի կատարելապես ուրախալի մի վայր (ինչպես գտնում է լավատեսական անաստվածությունը), կամ անիմաստ տառապանքների անհասկանալի վայր (ինչպես գտնում է հոռետեսական անաստվածությունը): Մարմնավոր աչքերին, անշուշտ, իմաստը չի երեւում, բայց դրան շատ հեշտ է, ավելի քան հեշտ է հավատալ, եթե մտածենք մեր անձի եւ Ավետարանի շուրջ: Այդ իմաստի մասին է աղաղակում ողջ բնությունը, նրա մասին է սկսում աղաղակել մարդկային ամեն արթնացած հոգի:

Որքա՜ն հոգատարությամբ պիտի մենք ամենքս՝ «չհասունացած» մարդիկս, վերաբերվենք միմյանց... Որքա՜ն անհրաժեշտ է, որ մեկս մյուսի մեջ հոգ տանենք այդ «հասունացման» մասին, դեպի ազատ օդ՝ Աստծո արեգակի ներքո, այդ ելքի մասին:



Մարդը խիստ պատասխանատու է ամեն ինչի համար, եւ տեսականորեն շատ դժվար է պատկերացնել այն մարդու դժբախտությունը, ով, աստվածմերժողությամբ ապրելով երկրի վրա «այնպես, ասես ոչինչ չկա», հանկարծ դեմառդեմ կհայտնվի իրականության առաջ, որը ոչ միայն ավելի պայծառ է, քան մեր այս երկիրը, այլ նույնիսկ գերազանցում է իրականության մասին մեր բոլոր պատկերացումները... Արդյոք այսպիսի հոգիների համա՞ր չէր տառապում Տերը Գեթսեմանիի պարտեզում: Համենայն դեպս, նրանց համար է՛ւս Նա չարչարվեց խաչի վրա:

Եթե տեսանելի երկինքը մեզ չբաժաներ անտեսանելի երկնքից, մենք կցնցվեինք հոգեկան այն անհամապատասխանություններից, որ գոյություն ունեն հրեշտակային հաղթանակած Եկեղեցու եւ մեր երկրային Եկեղեցու՝ համարյա չպայքարող, ճլորած մարդկային հոգիների միջեւ: Մենք կսարսափեինք եւ հստակորեն կհասկանայինք այն ճշմարտությունը, որն այժմ անհասկանալի է մեզ՝ թե ի՛նչ արեց մեզ համար Տեր Հիսուս Քրիստոսը եւ ի՛նչ է Նա անում մեզանից յուրաքանչյուրի համար: Նրա փրկությունը մենք պատկերացնում ենք համարյա տեսականորեն, վերացական կերպով: Բայց եթե մենք տեսնեինք, մի կողմից, կայծակնային, լուսեղեն, հրեղեն, բոցեղեն մաքուր հոգիներին, որ վառվում են Աստծո հանդեպ անպատմելի սիրով եւ ձգտում ամբողջ արարչության փրկությանը, եւ, մյուս կողմից, տեսնեինք երկիրն իր հարյուր միլիոնավոր կիսամարդ-կիսամիջատներով, որոնց սրտերն ուղղված են միայն դեպի երկիրը, իրար խժռող մարդկանց՝ ինքնասեր, հաճույքասեր, փողասեր, անբարեհամբույր, իրենց կպած մութ ուժերով բռնված, մենք կզարհուրեինք ու կդողայինք: Եվ մեզ համար հստակ կդառնար փրկության անհնարինությունը «բնական» ճանապարհներով: Օկուլտիստների դատողությունները վերամարմնավորվող մարդկության՝ դեպի վեր էվոլյուցիոն շարժման մասին մեզ կթվային, լավագույն դեպքում, անմտություն: Մենք կտեսնեինք, որ մարդկության վրա տիրող խավարը ոչ թե նոսրանում է, այլ խտանում... Եվ մենք կհասկանայինք, թե ի՛նչ արեց մարդկանց համար նրանց երկրի վրա մարդացած Արարիչը: Մենք կտեսնեինք, թե ինչպես նույնիսկ մեկ հատիկ ունեցող հասկերը վերցվում են երկնային հնձվորների կողմից դեպի երկինք, որ մարդու մեջ Քրիստոսի ամենափոքրիկ կայծն իսկ, ինչպես հասկում եղած միակ հատիկը, արդեն փրկում է այդ մարդուն: Ամեն մթություն հատվում է, կտրվում. վերցվում է միայն այդ կայծը, եւ այն դառնում է մարդու հավիտենական կյանքը: Փա՜ռք Քրիստոսի փրկագործությանը: Իրապես, մենք ոչինչ չունենք մեր մեջ, բացի փոշու մեջ ընկած մեր մարդկային արժանապատվությունից: Եվ այդ փոշուց մենք դուրս ենք գալիս Քրիստոսի շնորհով եւ կայծակի պես տարվում երկինք: Սակայն տարվում ենք, եթե մեր մեջ վառվե՛լ է Աստծո սիրո այդ կայծը, եթե մենք ընդունակ ենք հոգով վանվելու աշխարհում եղած ամեն մեռելությունից, *ընդունակ ենք նկատելու այդ մեռելությունը նույնիսկ ամենափոքր բաներում*, եւ նաեւ այն վանելու մեզանից: Մեր մեջ նույնիսկ ամենափոքր բանի հանդեպ նրբանկատությունը կլինի մեր հոգու առողջության ցուցանիշը: Եթե ատոմներն իրոք իրենց մեջ ամփոփում են արեգակնային ճշգրիտ համակարգերը, ապա դա սքանչելի օրինակ է բոլոր մեղքերի՝ մեծ թե փոքր, օրգանական միատեսակության:

*Շարունակելի*

***Թարգմ. Ս. ՍՏԱՄԲՈԼՑՅԱՆԻ***

*Սկիզբը՝ թիվ 20*

# ՆՅԱՐԴԱՅԻ՞Ն, ԹԵ՞ ՀՈԳԵՎՈՐ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ

**Սեւեռունություն.** սեւեռուն (կպչուն) կարող են լինել ինչպես մտքերը, հույզերը, պատկերացումները կամ կասկածները, այնպես էլ՝ գործողությունները: Սրանց կարգին են դասվում նաեւ սեւեռուն վախերը՝ փակ տարածքից (կլաուստրոֆոբիա), բաց տարածքից (ագորաֆոբիա), հիվանդանալուց (նոզոֆոբիա), կարմրելուց (էրեյտրաֆոբիա), կեղտոտվելուց (միզոֆոբիա) եւ այլն: Վախը հատուկ է մեր ընկած մարդկային բնությանը:

Սուրբ հայրերը, սակայն, նշում են, որ վախի հետեւում հաճախ է կանգնած լինում փառասիրությունը. հաճախ է ֆոբիա-յի վերածվում այն վախը, որը մարդուն համակում է միջավայրում (նույնիսկ՝ անծանոթ), երբ նա երկյուղում է, թե որեւէ արարքով իրեն կզրկի շրջապատի համակրանքից, իր մասին ունեցած այս կամ այն կարծիքից: Իսկ հոգեբանական գրականության մեջ այն ներկայացվում է որպես զգացում, որ ծնվում է մարդու՝ վտանգավոր դրության մեջ հայտնվելու պատճառով: Մարդը մտածում է, որ իր ուժերից վեր է հաղթահարել այս կամ այն արգելքը, դուրս գալ վտանգավոր կամ անհաճո միջավայրից:



Եթե այս դրությանն էլ նայենք հոգեւոր տեսանկյունից, կասենք, որ այստեղ էլ մարդը «ամբողջ սրտով, ամբողջ մտքով եւ հոգու ամբողջ զորությամբ» չի հավատում, որ Աստված իր հետ է, որ Նա՛ է իր պահապանը, ու առանց Նրա գիտության՝ իր գլխից մի մազ անգամ չի ընկնի: Ահա եւ ախտորոշումը. սա անհավատության կամ թերահավատության վիճակ է, եւ դեղատոմսն է... Բայց անդրադառնանք մյուս սեւեռուն մտքերին եւս եւ նշենք, որ ոչ քրիստոնյա գիտնականները չեն կարողանում սպառիչ պատասխան տալ այս երեւույթի առաջադրած հարցերին, բնութագրել տառապող մարդու մոտ ընթացող երեւույթները եւ բուժման տարբերակ առաջարկել: Մինչդեռ քրիստոնեական վարդապետությունը դեռ 2000 տարի առաջ սահմանել է այն՝ որպես դեւի հարձակում մարդու մտավոր ոլորտի վրա: Եվ այստեղ, իրոք, անզոր է ժամանակակից բժշկությունը (հոգեբանները հավաստում են, որ սեւեռուն մտքերից մարդուն ազատելն ամենադժվար, երբեմն էլ ուղղակի անիրականանցնելի բուժումն է իրենց համար):

Իսկ ի՞նչ է ասում Սուրբ Գիրքը. «Պիղծ ոգին... գալիս է ու այն (մարդու հոգին) գտնում դատարկ՝ մաքրված ու կարգի բերված: Այն ժամանակ գնում եւ վերցնում է իր հետ իրենից ավելի չար յոթ այլ ոգի եւ մտնում բնակվում է այնտեղ. եւ այդ մարդու վերջը լինում է ավելի վատ, քան առաջ էր» (Մատթ. ԺԲ 43-45):

Ուրեմն, ի՞նչ անել: Նախ հարկ է արտաքսել դեւին կամ դեւերին՝ աղոթելով ու պահեցողությամբ, զղջալով ու ապաշխարելով, եւ թեթեւություն զգալուն պես՝ չհապաղել (որպեսզի պիղծ ոգին չվերադառնա ու գտնի իր տունը դատարկ), այլ հաղորդությամբ Քրիստոսին Ի՛ր տանը՝ մեր հոգում բնակեցնել:

**Հիստերիա.** նյարդային հիվանդությունների այս տեսակն իր անունը ստացել է հունարեն «արգանդ» բառից, քանի որ հնում կարծում էին, որ միայն կանայք են հիստերիկ լինում: Այսօր, անշուշտ, հայտնի է, որ այն հատուկ է բոլորին՝ անկախ սեռից ու տարիքից, դիրքից ու շրջապատից: «Այս հոգեպաթոլոգիկ երեւույթի բնութագրումը կարող է տրվել որպես ցուցամոլություն»,- սահմանում է հոգեբան Դ. Ա. Ավդեեւը: Հիստերիկ մարդկանց մոտ դժվար չէ նկատել զգացմունքների անհավասարակշռություն, տրամադրության բուռն ու վառ արտահայտումներ: Այս մարդկանց խոսքը տարբերվող է, նկատելի է փաստերի հաճախակի ուռճացում, չափազանցություն: Դիմախաղն արտահայտիչ է, անգամ՝ թատերական: Հիստերիկը ծարավի է իր անձի նկատմամբ ուշադրության եւ ծանր է տանում դրա բացակայությունը: Հոգեբերապեւտ Պ. Բ. Գանուշկինն ասում է. «Յուրաքանչյուր արարք, յուրաքանչյուր շարժում արվում են հանդիսատեսի վրա տպավորություն գործելու համար:

*Շարունակությունը՝ էջ 8*

**Նիկոլայ ԲԵՐԴՅԱԵՎ**

# ՄԱՀ ԵՎ ԱՆՄԱՀՈՒԹՅՈՒՆ

*Սկիզբը՝ թիվ 17, 20*

Այսուհանդերձ, մահվան դեմ պայքարը՝ հանուն հավիտենական կյանքի, մարդու հիմնական խնդիրն է: Բարոյագիտության բուն սկզբունքը կարող է այսպես ձեւակերպվել. վարվիր այնպես, որպեսզի ամենուրեք եւ ամեն ինչով, ամեն բանի ու բոլորի հանդեպ քո վերաբերմունքով հաստատվի հավիտենական եւ անմահ կյանքը, մահվան պարտությունը: Թեկուզ մի կենդանի արարածի մահվան մասին մոռանալը ցածրոգություն է, ցածրոգություն է մահվան հետ հաշտվելը: Մահը ամենաստորին, ամենախղճուկ արարածի համար էլ անտանելի է, եւ եթե նրա հանդեպ մահը չպարտվի, ապա աշխարհին արդարացում չի ունենա եւ չի կարող ընդունվել: Ամեն ինչ եւ ամեն բան պետք է հարություն առնի հանուն կյանքի եւ հանուն հավիտենական կյանքի: Դա նշանակում է, որ ոչ միայն մարդկանց, այլեւ կենդանիների, բույսերի, նույնիսկ՝ իրերի նկատմամբ պետք է հաստատվի հավիտենականի գոյաբանական սկզբունքը: Մարդը մշտապես եւ ամեն բանում պետք է լինի կյանք ներշնչողը, կյանքի արարչական էներգիայի ճառագողը: Ամենայն կենդանյաց, ամենայն գոյության հանդեպ սերը, երբ դառնում է մեզ զբաղեցնող գաղափար, պայքար է մահվան դեմ՝ հանուն հավիտենական կյանքի: Աշխարհի եւ մարդու հանդեպ Քրիստոսի սերը կյանք պարգեւելն է՝ դեռ ավելիով, հաղթանակն է մահաբեր ուժերի դեմ: Էսկեզի բուն իմաստն իր մեջ պայքարն է մահվան, մահացության դեմ: Հանուն հավիտենական կյանքի պայքարը թե քո եւ թե ուրիշ մի արարածի հանդեպ պահանջում է այնպիսի վերաբերմունք, ասես թե դու եւ թե այն ուրիշը կարող եք ուզածդ պահի մահանալ: Դա է աշխարհում մահվան բարոյական նշանակությունը: Հաղթի՛ր մահվան ստորացուցիչ, կենդանական վախը, բայց քո մեջ մշտապես ունեցիր մահվան բարոյական վախը, սրբազան վախը մահվան խորհրդի առջեւ: Չէ որ հենց մահով է մարդկանց տրվել գերբնականի գաղափարը: Կրոնի թշնամիները, ինչպես օրինակ, Էպիկուրը, մտածում են, թե հերքել են այն՝ ընդունելով նրան որպես մահվան վախի աղբյուր: Բայց նրանց երբեք չի հաջողվի հերքել այն ճշմարտությունը, որ մահվան երկյուղում, նրա առջեւ սրբազան երկյուղում է մարդը հաղորդակից դառնում գոյության խորագույն խորհրդին, այն որ մահվան մեջ է հայտնությունը: Կյանքի ու մահվան բարոյական պարադոքսը փորձենք արտահայտել բարոյագիտական հրամայականով՝ ողջերին վերաբերվի՛ր որպես մեռածների, մեռածներին՝ ողջերի, այսինքն՝ մշտապես հիշիր մահվան մասին՝ որպես կյանքի գաղտնիքի, եւ թե՛ կյանքում, թե՛ մահվան մեջ հաստատիր հավիտենական կյանքը: Կյանքը ոչ թե իր տկարություններով, այլ իր հզորությամբ, լարվածությամբ, իր գերառատությամբ է սերտորեն կապված մահվան հետ: Դա զգացվում է դիոնիսիզմում եւ բացահայտվում մշտապես մահվանն առնչվող սիրո մեջ: Կիրքը, այսինքն՝ կյանքի մեծագույն լարվածության դրսեւորումը, միշտ հղի է մահով: Եվ նա, ով ընդունում է սերը՝ իր գերառատ ուժով ու ողբերգությամբ, ընդունում է մահը: Կյանքի վրա չափից ավելի դողացողն ու մահից փախչողը փախչում է սիրո ճակատագրից, զոհաբերում է սերը՝ հանուն կյանքի այլ խնդիրների: Էրոտիկ սիրո մեջ կյանքի գերլարվածություն կա, եւ դա էլ տանում է աշխարհում կործանման ու մահվան: Սիրողը դատապարտված է մահվան եւ սիրեցյալին էլ է մատնում կորստյան: Վագներն իր «Տրիստանը եւ Իզոլդան» դրամայի երկրորդ գործողության մեջ տալիս է դրա երաժշտական հայտնությունը: Սոցիալական առօրեականությունը ջանում է թուլացնել սիրո ու մահվան միջեւ եղած այդ կապը, ցանկանում աշխարհում փրկել ու պահպանել սերը: Սակայն նա ընդունակ չէ նույնիսկ նկատելու այն: Սոցիալական առօրեականությունը, որը կազմակերպում է կյանքի շարունակությունը, միայն մի միջոց գիտի մահվան դեմ՝ ծնունդը: Ծնելության մեջ է կյանքը պատկերանում մահին հաղթող: Սակայն մահին ծննդյամբ հաղթելը չի ցանկանում ճանաչել անձնավորությանը, նրա ճակատագիրը, նրա հույսը. նա ընդամենը տոհմական կյանքի մասին գիտի: Ամեն մի ծնող դատապարտված է մահվան եւ դատապարտման է տանում ծնվածին: Ծնունդներով մահին հաղթելը խաբուսիկ հաղթանակ է: Մահին հաղթելու գաղտնիքը բնությունը չգիտի. դա միայն գերբնական աշխարհում է տեղի ունենում: Իրենց ողջ պատմության ընթացքում մարդիկ փորձել են պայքարել մահվան դեմ, եւ այդ հողի վրա ծագել են զանազան հավատալիքներ ու ուսմունքներ: Երբեմն էլ նրանք պայքարել են մահվան մոռացումի, երբեմն էլ՝ մահվան իդեալականացման եւ կամ՝ կորստյան ինքնամոռացումի դեմ:



Անպտուղ է փիլիսոփայության՝ հոգու բնական անմահության գաղափարը՝ նրա սուբստանցիալությունից բխող: Դա անցնում է լոկ մահվան փաստի կողքով, հերքում մահվան ողբերգականությունը:

Անմահության մասին նման ուսմունքի տեսակետից միանգամայն անտեղի է թվում պայքարը՝ հանուն հավիտենական կյանքի ու փտումի: Դա միանգամայն խոհամիտ մետաֆիզիկա է՝ առանց ողբերգության: Դպրոցական սպիրիտուալիզմը (իդեալիստական փիլ. ուղղություն) մահվան ու անմահության խնդրի լուծումը չէ, դա լիովին թյուր, կաբինետային, անկյանք տեսություն է: Իդեալիզմը նույնպես ոչ միայն բոլորովին չի լուծում, այլեւ մահվան ու անմահության խնդիրը չի բարձրացնում: Իդեալիզմը, ինչպես այն դրսեւորվել է գերմանական մետաֆիզիկայում, չի ճանաչում անձնավորությանը, այլ ընդունում է լոկ նրա համաշխարհային հոգու գործառույթներն ու գաղափարները, այդ իսկ պատճառով էլ ընկալունակ չէ մահվան ողբերգության խնդրում: Մահվան ողբերգությունը կարելի է ըմբռնել միայն անձնավորության խոր գիտակցության առկայությամբ: Մահվան ողբերգությունը շոշափելի է, քանզի անձնավորությունը զգում է իրեն որպես անմահ ու հավիտենական: Իր նշանակությամբ ու կոչումով անմահի, հավիտենականի մահն է միայն ողբերգական: Մահկանացուի, ժամանակավորի մահն ամենեւին ողբերգական չէ: Մահը ողբերգական է մարդ-անձնավորության համար, որովհետեւ անձնավորությունը Աստծո հավիտենական գաղափարն է, Աստծո՝ մարդու մասին հավիտենական մտահղացումը:

Անտանելի է մահը լիարժեք անձնավորության համար, ում տրված է ողջ մարդկային ուժերի ու կարողությունների միասնականությունը: Անձնավորությունը չի ծնվում հորից ու մորից, անձնավորությունն արարվում է Աստծուց: Մարդու՝ որպես բնության արարածի, որպես շարունակական ընթացքով ծնվածի, հոգու եւ մարմնի բնական անմահություն գոյություն չունի: Այս աշխարհում մարդը մահկանացու արարած է: Սակայն նա իր մեջ գիտակցում է Աստծո նմանությունն ու պատկերը: Անձնավորությունը գիտակցում է իր պատկանելությունը ոչ միայն բնական, այլեւ հոգեւոր աշխարհին: Այդ իսկ պատճառով էլ մարդն իրեն համարում է հավիտենությանը պատկան եւ ձգտում է հավիտենության:

*Շարունակելի*

*Թարգմանությունը՝*
*Սյուզաննա ՎԱՐԴԱՆՅԱՆԻ*

# ՆՅԱՐԴԱՅԻ՞Ն, ԹԵ՞ ՀՈԳԵՎՈՐ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ

*Սկիզբը՝ էջ 7*



Հիստերիկները ցանկանում են անպայման յուրօրինակ երեւալ եւ ոչ մի միջոց չեն խնայում իրենց նկատմամբ ուշադրություն նվաճելու համար»:

Հիստերիան դրսեւորվում է հիմնականում դեռ մանկուց եւ արագ զարգանում այն երեխաների մոտ, ովքեր մեծանում են փոքր՝ մեկ կամ երկու երեխա ունեցող եւ իրենց երեխաներին տիեզերքի կենտրոնը համարող ընտանիքներում (Հայաստանում հաճախ է ընտանիքն այսպիսին): Ինչպես գրում է պրոֆեսոր Յու. Ա. Օստրովսկին, այսպիսի անհատների մոտ դեռ պատանեկությունից կա համոզմունք, որ իրենք ունեն այնպիսի երեւելի ընդունակություններ, առանձնահատուկ շնորհներ, տաղանդ, որպիսիք շրջապատում ոչ ոք չունի: Նրանք իրենց հասցեին հիացական հայացքներ ու գովեստներ են փնտրում ամենուր: Այսպիսիք հակված են երեւակայելու. իսկ նրանց երեւակայությունների թեման իրենց հաղթանակներն են, իրենց աներեւակայելի քաջությունը, խելքը, հմտությունները: Նրանք սիրում են բարձրաձայնել, թե մտերիմ են այս կամ այն քաղաքական գործչի կամ արվեստագետի հետ (դա երբեմն զուտ երեւակայություն է) կամ անդամ են գաղտնի խմբակցությունների, կարեւոր կազմակերպությունների: Նշենք նաեւ, որ վատ հիստերիկ անհատականություններ են բազմաթիվ աղանդների հիմնադիրները:

Հպարտություն եւ փառասիրություն, սուտ եւ ցուցամոլություն. ահա հիստերիայի հոգեւոր բաղկացուցիչները: Եթե դրանք ակնհայտ են ընկերոջդ մեջ, եւ ցանկանում ես օգնել նրան, ապա հիշիր, որ հիստերիկին անհրաժեշտ է հանդիսատես. մի՛ եղիր այդ ցանկալի՝ ունկնդրող ու հիացող հանդիսատեսը, ու հիստերիան կդադարի: Իսկ եթե այս ախտը հարվածել է քեզ, ապա անկեղծորեն քննիր քեզ ու խնդրիր Տիրոջը մաքրել հոգիդ այդ կործանարար մեղքերից:

Նեւրոզն այնպիսի հիվանդություն է, որին ժամանակ առ ժամանակ հակվում է մեր մարդկային երկնքի ու երկրի միջեւ պայքարում հարակայող էությունը: Դրանից պաշտպանվելու ու բուժվելու լավագույն միջոցն աղոթքն է՝ զրույցը մեր ամենակարող ու ողորմած Բժշկի հետ: Նա՝ որպես լավագույն հոգեբան, պատրաստ է ունկնդրել մեզ, ախտորոշել մեր ցավն ու տալ դարմանը: Սուրբ հայրերը բազմաթիվ հզոր աղոթքներ են կտակել մեզ՝ բարկության, նախանձի, բռնջախոհության, հուսահատության եւ մյուս բոլոր «նեղ մասնագիտացած» դեւերի դեմ պայքարելու համար: Այնպես որ, վերցրու աղոթագիրքը, բացիր հոգուդ գաղտնարաններն ամենատես Տիրոջ առաջ ու… առողջ եղիր:

*Կարմեն ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ*

ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄՈՒՄ

# ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼԻ ԴԱՐՁՆԵՆՔ ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԻՆ

Հոկտեմբերի 21-ին Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին տոնեց սուրբ Մատթեոս, Մարկոս, Ղուկաս եւ Հովհաննես ավետարանիչների տոնը: Վեհափառ Հայրապետի հրամանով Հայաստանյայց բոլոր եկեղեցիներում մատուցվեց Սուրբ Պատարագ, այդ թվում եւ՝ Գուգարաց թեմի գործող բոլոր եկեղեցիներում:

Այս տարի այն աննախադեպ էր, քանի որ Պատարագի ավարտին Վանաձորի առաջնորդանիստ Սբ Գրիգոր եկեղեցու սրահում տեղի ունեցավ Սրբոց Գրոց ուսուցում՝ «Աստվածաշունչը եւ մենք» թեմայով՝ քաղաքի մի քանի դպրոցների բարձր դասարանների աշակերտների, ուսանողների եւ ուսուցիչների համար: Միջոցառմանը ներկա էին քաղաքային լրատվամիջոցների ու Մայր Աթոռի «Շողակաթ» հեռուստատեսության լրագրողները: Բանախոսությամբ հանդես եկավ Ս. Գր. Նարեկացի եկեղեցու հոգեւոր հովիվ Տ. Վահան քհն. Ազարյանը՝ ներկայացնելով Աստվածաշունչ Մատյանի բովանդակությունը, խոսելով նրա կազմավորման անցած ճանապարհի եւ կարեւորության մասին: Հարց ու պատասխանի ընդմիջումից հետո շարունակվեց բանախոսությունը՝ «Աստվածաշունչը եւ հայոց մշակույթը» թեմայով, ուր հատկապես բանախոսը կարեւորեց հայ մշակույթի վրա Աստվածաշունչ Մատյանի թողած ազդեցության մասին, որն ընդհանրացել է թարգմանական ու ձեռագրական արվեստի ու ճարտարապետության պսակումով:

Նմանատիպ հանդիպում-դասախոսություններ հոգեւոր հովիվների կողմից տեղի ունեցան նաեւ թեմի գործող եկեղեցիներում, մասնավորապես՝ Ալավերդի, Սպիտակ, Ստեփանավան, Տաշիր քաղաքների եկեղեցիներում:

Հատկանշականն այն է, որ այս հանդիպումները դարձան շարունակական եւ երիտասարդներն ու պատանիներն արդեն ամիսը երկու անգամ հավաքվում են իրենց հովիվների շուրջ՝ ստանալով իրենց հարցերի սպառիչ պատասխանները:

Սա վերազարթոնքն է Հայոց Եկեղեցու երբեմնի քարոզչական ու կազմակերպչական գործունեության:

*Գուգարաց թեմի Քրիստոնեական դաստիարակության կենտրոն*

**ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ**
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
**Հիմնադիր՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
**Հրատարակիչ՝**
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
**Գլխավոր խմբագիր՝**
Աստղիկ Ստամբոլցյան
**Գրանցման վկայական՝ 624**
**Խմբագրության հասցեն՝**
ք. Վաղարշապատ, ՔԿ
**հեռախոս՝ (0+231) 54510, 56780**
Ստոր. տպագր. 15. 11. 2006 թ.
**Տպաքանակը՝ 2500 Գինը՝ 50 դրամ**